

Վարուժան Ոսկանյան: Շշուկների մատյան Գլուխ յոթ եվ ութ

Թարգմանությունը Սարգիս Սեյանի
Անտարես, Երևան, 2014

ՅՈՒՐՈՒՄ

– Անոնց կիներուն չդպիր, – ասաց Արմեն Կարոն: – Ոչ ալ երախաներուն:

Հատուկ գործի խմբի բոլոր անդամները մեկ առ մեկ հավաքվել էին Կոստանդնուպոլսի «Ճակատամարտ» թերթի խմբագրատանը: Ընտրվել էին բժախնդրությամբ: Հետո խմբից պահպանվել էին միայն նրանք, ովքեր անձամբ կամ դարանակալ հարձակումներով արդեն մասնակցել էին այդպիսի գործողությունների: «Միայն անձի մը, որ արդեն սպանած է, հավատք ունի», – որոշել էր Արմեն Կարոն: Ստացան նրանց լուսանկարները, ում որ պիտի գտնեին իրենց թաքստոցներում: Իսկ թաքստոցները կարող էին լինել ամենուրեք՝ Բեռլինից ու Հռոմից մինչև Կենտրոնական Ասիայի տափաստանները: Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան, լայն ուսերով ու հաստ վզով, ջլապինդ մարմին ուներ, որի քառակուսի կզակով ու պատառոտելու պատրաստ ծնոտներով գլուխը կարծես գորեղ կրծքի շարունակությունը լիներ: Իսկ լուսանկարի ներքևում՝ բունցքները, սովորական մարդու բունցքների կրկնապատիկը, մատնում էին նրա ազդեցիկությունը: Կողքին՝ նրա փխրուն ու նուրբ դիմագծերով կինը, եվրոպական նորաձևության համաձայն՝ սպիտակ հագուստով ու ժանյակե գլխարկով, որը շատ տարբեր էր փաշայի ֆեսից: Հետո կարճահասակ, սակայն ճոքավոր կոշիկների կրունկների շնորհիվ բոլորով երևացող Էնվերը: Գոռոզ հայացք ու բեղի ծայրերը բռնած բարակ մատներ, հպարտ՝ բանակի հրամանատարի իր գարդերիզներով, որոնք առատորեն ընկնելով ուսերի վրա ու նեղ կուրծքը ծածկելով, փորձում էին թաքցնել նրա համեստ ծագումը՝ իբրև որդին մի մոր, ով նրան կրթության տալու համար կայսրությունում ամենաարհամարհված՝ մեռել լողացնողի գործն է արել: Մի լուսանկարում նրա բարակ, տիրական, սակայն երկչոտ բազուկը բռնել էր իր կնոջ՝ Նաջեհի քնքուշ մեջքը: Նաջեհը կայսերական հարեմի իշխանուհին էր, այսինքն՝ սուլթանի դուստրը: Մի այլ լուսանկարում մեռել լվացողի որդի ու սուլթանի փեսա Էնվերը, անշարժ դիմագծերով, ճիգ էր թափում վեհ թվալու իր կուրքերի՝ Նապոլեոնի և Ֆրիդրիխ Մեծի դիմանկարների միջև: Ջեմալ Փաշան այդ ռազմական եռապետության յուրատեսակ Լեպիդուսն էր: Իր հասարակ տեսքով, եթե Ռազմածովային նավատորմի նախարարի ուսադիր չկրեր, կարող էր բոլորովին աննկատ մնալ, թեև ջանք էր թափում Թալեաթի բրտության և Էնվերի գոռոզության հետ համընթաց քայլել: Հետո Միություն և առաջդիմություն կուսակցության գաղափարախոսներ դոկտոր Նազրմը և Բեհաեդդին Շաքիրը, ովքեր հղացել էին բանտերից ոճրագործներին հանելու գաղափարը, որոնք հավաքագրվելով զինված միավորումներում՝ հսկելու և ճամփաբաժաններում կոտորելու էին հայերի շարասյունները: Չգիտենք, թե որքան գեղեցիկ էին նրանց կանայք, միայն թե գիրուկ էին ու թխահեր, իսկ դիմագծերը լավ չեն երևում, քանի որ նրանց երիտասարդ ժամանակվանից պահպանված մեկական լուսանկարում, ուր նրանք,

վրիժառու խմբի կողմից երդումն ի կատար ածվելուց հետո, ողբում էին դագաղներում դրված ամուսինների գլխավերևում, երեսները ծածկած են քողով: Եվ մյուսները՝ Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմին, Բահրեղ խան Ջիվանշիրը... Արմեն Կարոն վերցրեց Թալեաթի և Էնվերի լուսանկարները՝ իրենց կանանց հետ միասին: Մեկ առ մեկ նայեց յուրաքանչյուրին՝ Սողոմոն Թեիլեյան, Արամ Երկանյան, Արշավիր Շիրակյան, Հրաչ Փափագյան, Միսակ Թողաքյան:

– Գիները չսպանեք,– կրկնեց նա:– Ոչ ալ անոնց երախաները:

Մեզ համար կարևոր չէ այս հանդիպման թվականը: *Շուկների մատյանը* ոչ թե պատմության դասագիրք է, այլ՝ խղճի վիճակների գիրք: Ուստի այն դառնում է ճառագող, էջերն էլ՝ թափանցիկ: Ճիշտ է, որ *Շուկների մատյանում* բազում ճշգրիտ թվականներ կան, որոնք նույնիսկ օրը, ժամը և տեղն են նշում: Գրիչը շատ արագ է շարժվում, բայց երբեմն որոշում է կանգ առնել՝ ինձ և ընթերցողին սպասելով, իսկ այդ ժամանակ գուցե մանրամասնում է ավելի, քան անհրաժեշտ է: Յուրաքանչյուր հավելյալ բառ պարզաբանում է, սակայն հենց այդ պատճառով նվազեցնում իմաստը:

Ուրեմն, նույնիսկ եթե դրանից ջնջենք տարիների շարադրանքը և օրերի հաշվարկը, *Շուկների մատյանը* կպահպանի իր բոլոր իմաստները: Նման բաներ մարդկանց հետ միշտ և ամենուր կատարվել են: Փաստորեն, *Շուկների մատյանն* իր խորքում նույնն է մնում բոլոր ժամանակների համար, ինչպես Յոհան Մեքաստիան Բախի մի խմբերգ, ինչպես մի նեղ դուռ, որից մարդիկ անցնում են կռանալով կամ մեկը մյուսին սեղմված:

– Նախ և առաջ, մեր բանաստեղծը սպանեցին,– ասաց Շավարշ Միսակյանը:

Թերթի խմբագրատունը հրաշքով փրկվեց աղետից: Ինչևէ, մայրաքաղաքի բոլոր հայերի համար 1915-ի ապրիլի 24-ին սանձազերծված ջարդից հետո, երբ հարյուրավոր մտավորականներ ձերբակալվեցին ու մեծ մասն սպանվեց, աքսորելու հրահանգը չեղյալ հայտարարելը հրաշք համարվեց: Նրանք կիսելու էին հայկական մյուս համայնքների ճակատագիրը՝ վտարվելով իրենց տներից և ունեցվածքը կողոպտվելով, սակայն ունենալով ավելի դաժան ճակատագիր, որովհետև, ի տարբերություն Վանի, Սվազի կամ Ադա-նայի հայերի, ստիպված պիտի լինեին շարասյուններով կտրել Անատոլիայի ամբողջ սարահարթը դեպի Սիրիայի անապատները, որտեղ, եթե զինված ոճրագործների գործերը կամ քոչվոր ավազակախմբերը նրանց չջարդեին, ապա սովից ու ցրտից պիտի մեռնեին՝ հապճեպ ստեղծված վրաններում, անապատում, որտեղ կեսօրվա տոթը և գիշերվա սառնամանիքը հավասարապես բաժանում էին գոհերին:

1915-ի ապրիլին արգելված «*Ազատամարտը*», որ այն ժամանակ Հայ Հեղափոխական Դաշնակցության կենտրոնական պաշտոնաթերթն էր, 1918-ին վերահրատարակվեց նոր անվանումով, որը սակայն հիշեցնում էր առաջինը՝ «*Ճակատամարտ*»: Շավարշ Միսակյանն այն ժամանակ խմբագրապետ էր ու վերադարձել էր իր պաշտոնը շարունակելու: Նստած էր մի անկյունում, Հատուկ գործի մաս չէր կազմում, բայց ուներ այնպիսի հեղինակություն, որ անհրաժեշտ էր Արմեն Կարոյին ու Շահան Նաթալիին: Հեղինակություն, որ նրան տալիս էր ոչ թե որևէ վեհությունից զուրկ իր հասակը, այլ հենց կախ ընկած ձախ ուսն ու ծուռ վիզը: Նրա հաշմությունը մյուսներին պատկառանք էր ներշնչում, որովհետև հիշեցնում էր այն համառությունը, որով դիմացել էր չարչարանքներին զինվորական բանտում, որտեղ 1916-ի մարտին բանտարկվել էր և որտեղ, մի քանի ամիս ավելի ուշ, չարչարողների ձեռքերից պոկվել էր՝ եր-

րորդ հարկից նետվելով ներքին բակը: Ծանր վերքերով վերապրել էր և ազատ արձակվել 1918-ի նոյեմբերի 27-ին, երբ դաշնակից զորքերը գրավել էին մայրաքաղաքը: Այսուհանդերձ, ջարդված ոսկորներով մարմինն իր վրա էր վերցրել աշխարհի անարդարությունները՝ բոլորին հիշեցնելով, որ մահու սարսափից էր փրկվել: Թշնամիները գիտեին, որ որպես ազգ նրանց ոչնչացնելու համար նախ պետք էր անհապաղ բանաստեղծին սպանել: Հարստահարված ու վտանգված մի ժողովրդի համար բանաստեղծը դառնում է առաջնորդ: Դանիել Վարուժանը մյուս մտավորականների հետ ձերբակալվել էր 1915-ի ապրիլի 24-ին: Կապեցին ծառին ու քարերով սպանեցին, հետո ավար թողեցին գազաններին և գիշերային ոգիներին: Առասպելներն ասում են, որ ողջ է, և, ոմանք պատում էին, թե Զմյուռնիայի հրդեհի ժամանակ մի պահ այրվող հայելիների մեջ նրա դեմքն են տեսել: Դանիել Վարուժանի հարություն մասին այս առասպելներից միակ բանը, որ կարող ենք փաստել, այն է, որ իմանալով նրա տանջանքների տեղը, ուր կապվել էր ծառաբնին՝ դառնալով կենդանի խաչ, նրա գերեզմանի տեղը չգիտենք: Իմանալով նրա մահվան փաստը և նույնիսկ դահիճի անունը՝ Չանկըրըի պարագլուխ Օղուզ բեյ, բայց չիմանալով նրա գերեզմանի տեղը, կարող ենք գայթակղվել նրա հարության պատրանքով:

Ապրիլի 24-ին այլ ձերբակալվածներ, ինչպես զորօրինակ՝ Խորհրդարանի երկու անդամները, Կոստանդնուպոլսի և Էրզրումի պատգամավորներ Գրիգոր Զոհրապյան ու Վարդգես Սերինգուլյանը, մինչև սիրիական անապատները հասան՝ նախ Ուրֆա, հետո՝ Հալեպ: Նրանց մասին վկայում է Հալեպի գերմանացի հյուպատոս Ռոյսլերը գերմանական դեսպան Վանգենհայմին ուղղված մի նամակում. «Զոհրապը և Վարդգես էֆենդին գտնվում են Հալեպում՝ մի շարասյան կազմում, որն ուղեկցվում է դեպի Դիարբեքիր: Նրանց համար սա հաստատ մահ է նշանակում. Զոհրապը սրտային հիվանդ է, իսկ Վարդգեսի կինը հենց նոր է ծննդաբերել»:

Պապերիս մանկության ժամանակ կատարված ոճիրների մասին շատ բաներ իմացա ոչ այնքան վերապրողների վկայություններից, որքան՝ հատկապես ոճրագործների պարծենկոտությունից: Որքա՞ն տարբերություն մահացողների խոնարհության ու սպանողների գոռոզամտության միջև... Այսպես, գիտենք, որ երկուսին էլ սվիններով սրախողիտող արեցին, Վարդգեսի ուղեղը ցրեցին գենքի կրակոցներով, իսկ Զոհրապի գլուխը ջարդեցին քարերով: Մարմինները կտրատեցին և այդպես էլ թողեցին: Եթե մեկնումեկը ջանք թափեր այդ օրերի բազում մեռյալներին թաղելու, ջախջախված մարմինների մնացորդներից չէր կարողանա ճանաչել նրանց:

Բայց աշխարհն առաջ է գնում: Դանիել Վարուժանի սպանված տեղը կոչվում է Տունա: Նախքան ընտանիքից բաժանվելը, բանաստեղծն ասաց. «Հոգ տարեք նորածին տղուս: Անունը Վարուժան դրեք»:

– Նրա վրեժը պիտի լուծենք, մյուսներունն ալ,– ասաց Արմեն Կարոն՝ հայացքը Շավարշ Միսակյանի վրա սևեռելով:– Ճիշտ ատոր համար անոնց կիներուն և երախաներուն չդպիր: Մենք մեռյալներ կողոպտողներ չենք, ոչ ալ կիներ սպանողներ: Նստած էին առաջին շարքում:

– Արմենն իրավունք ունի,– ասաց Շավարշ Միսակյանը:– Զորավար Դրոյի օրինակին հետևեցեք:

Այդ ժամանակ Դրոն դեռևս գորավար չէր: 1905-ի փետրվարին ընդամենը քսանմեկ տարեկան էր, երբ Բաքվում երեք օր ջարդեր տեղի ունեցան: Մի քանի հազար հայ սպանվեց թաթար ավագա-

կախմբերի կողմից: Իսկ ցարական նահանգապետ իշխան Նակա-
շիձեն, ի հեճուկս նախազգուշացումների և հետո հայ բնակչության
հուսահատ կանչերի, ոչ միայն ոչինչ չարեց նրանց պաշտպանելու
համար, այլև դեռ ավելին՝ հարձակվողների համար զենքեր հայ-
թայթեց: Հայ Հեղափոխական Դաշնակցության Կենտրոնական Կո-
միտեն նահանգապետ Նակաշիձեին ծանուցեց, որ կուսակցությունը

նրան մահվան է դատապարտել: Այդ վճռի կատարումը հանձնա-
րարվեց երիտասարդ Դրաստամատ Կանայանին, որին արդեն զո-
րավար Դրո անվամբ հանդիպեցինք:

Որոշված օրը Դրոն նահանգապետի շքախմբին էր սպասում մի
նեղ փողոցում, որտեղ կազակ ձիավորների պահակախումբը չէր
կարող իշխանի կառքը շուրջանակել: Ռուսները դրել էր մի փոքր
տոպրակի մեջ ու խաղողի ողկույզներով ծածկել: Տեսնելով, սա-
կայն, որ իշխանին ընկերակցում է նրա կինը, Դրոն տատանվեց ու
վերջապես հրաժարվեց, բավարարվելով անցնող շքախումբը դի-
տելով: Սպասեց մինչև երեկոն իջավ: Վերադարձին կառքում միայն
իշխանն էր: Երբ պահակախումբն իր մոտ հասավ, Դրոն տոպրակը
կառքի մեջ նետեց ու փախավ: Պայթյունն ահավոր էր: Նակաշիձեի
հետ միասին ցրիվ եղան նահանգապետական պահակախմբի բա-
զում հեծյալներ: Խուճապից օգտվելով՝ Դրոյին հաջողվեց անհե-
տանալ, իսկ մի քանի ընկեր նույն գիշերը նրան թուրքական սահ-
մանից այն կողմ անցկացրին: Որտեղ ինը տարի մնաց՝ մինչև պա-
տերազմի սկիզբը:

– Բայց այն ատեն Դրոն չէր կրնար երևակայել ինչ պիտի պա-
տահեր, – ասաց Արշավիր Շիրակյանը: Ոչ ոք չէր կարող պատկե-
րացնել: Հայոց ղեկավարները Երիտասարդ թուրքերին օգնել էին
իշխանության գլուխ անցնել՝ համարելով, որ նրանք վերջ կտան
արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի դաժանություններին: Վարդ-
գես էֆենդին՝ Էրզրումի ապագա պատգամավորը, հակահեղափո-
խության ժամանակ իր բնակարանում էր պահել այն նույն Խալիլ
բեյին, ով հետագայում նրան սպանելու հրամանն էր տալու: Եվ,
ճակատագրի հեգնանք, մինչ Դրոն համարել էր, որ կինը չպիտի
վճարի ամուսնու մեղքերի համար, դրանից երեսուն տարի անց
Օմսկում, Ստալինի հրամանով Դրոյի կինը որդիներից մեկի հետ
սպանվում է՝ վճարելով ամուսնու արարքների համար:

– Տրապիզոնի մեջ, – ասաց Միսակ Թռուլաբյանը, – քանի մը հա-
զար կիներ, իրենց երախաներուն և ծերերուն հետ, որոնք չէին
կրնար քալել, լաստերու վրա դրին և բաց ծովով դրկեցին: Կիները
ուրախացան, այդ ամբողջ աղետին մեջ, երբ ըսվեցավ, որ ճամ-
փուն մեկ մասը ջուրի վրա պիտի ընեն, այդպիսով ավելորդ
հոգնություն մը խնայված ըլլալով: Բայց հաջորդ օրը լաստերը պա-
րապ վերադարձան ափ: Կիները ծովուն մեջ խեղդած էին: Նույն
բանը պատահեցավ Ունիե, Օրդու, Տրիպոլի, Կերասուն և Ռիզե: Իմ
գյուղեն՝ Գյուշանայեն, ոչ մեկ կին շարապյուներով հասավ Մեսքե-
նե, Ռաքքա, Ռասուլ Այն կամ Դեյր Էզ-Ձոր, ինչ որ կնշանակե, թե
բոլորը ճամփան մեռան՝ անթությունե, փամփուշտե կամ դանակե:

– Խարբերդի վիլայեթի մեջ, – ասաց Սողոմոն Թեհլերյանը, –
հունիսին, նախ երևելիները մեռցուցին, հետո քաղաքներեն ու գյու-
ղերեն այրմարդիկը վերցուցին: Շարապյուները միայն կիներով, ծե-
րերով և երախաներով կազմված էին: Արաբկիրի մեջ, կիները նա-
վակներու մեջ նստեցուցին և հետո ջրամույն արեցին: Գերմանա-
կան որբանոցի հայ որբերը մոտակա լիճին մեջ խեղդեցին: Մեսնեի
կիները, որոնք դեպի Ուրֆա դրկված էին, ճամփուն վրա սպանե-
ցին և անոնց դիակները գետի մեջ նետեցին: Եփրատի արևելյան
ափին խեղանդամված և ջարդված կիներուն մարմինները Սվազի

և Խարբերդի միջև ճամփուն վրա մնացին ամիսներ շարունակ, ճամփաներու եզերքը կամ ձորերու մեջ: Շատ-շատ էին թաղվելու համար: Անոնց կմախքները դեռ կտեսնվեին 1916-ի կեսին: Գրեթե երկու հարյուր հազար հոգիներեն, որքան էին շարասյուններուն մեջ, միայն մեկ տասերորդը հասան Ռասուլ-Այն և Դեյր էզ-Ջոր:

– Առաջին կիները, որոնք Մեսքենե, Ռաքքա և Դեյր էզ-Ջոր հասան,– ասաց Արամ Երկանյանը,– Եփրատի վրա լողացող դիակներն էին: 1915-ի հուլիս ամբողջ ամիսը, Եփրատը ջուրեն ուռած դիակներով, գլուխներով, ձեռքերով ու ոտքերով էր ծածկված: Գետին ջուրերը կարմիր էին, ամեն տեղ կարծես այդ պահուն ծնած էր մահը:

Վկայություն տվողների շրջանակն ընդլայնվեց:

«Եփրատի վրայով անընդհատ դիակներ են անցնում,– ասաց Հալեպի գերմանացի հյուպատոս Ռոյսլերը:– Բոլոր մարմինները կապված են նույն ձևով՝ երկուական և մեջք մեջքի: Մա ցույց է տալիս, որ սպանությունները պատահական չեն, այլ իշխանությունները բնաջնջման մի ընդհանուր ծրագիր են հղացել: Դիակները հետզհետե մեծ թվով են հոսում: Մանավանդ կանանց ու երեխաների»:

«Ավելի քան վեց հարյուր հայ,– ասաց Մոսուլի գերմանացի հյուպատոս Հուլտայնը,– հատկապես Դիարբեքիից վտարված կանայք ու երեխաները, տեղափոխության ժամանակ սպանվեցին Տիգրիս գետի վրա: Վերջին մի քանի օրը, գետի վրա լողում են դիակներ ու մարդկային մարմնի անդամներ: Ճանապարհին ուրիշ շատ շարասյուններ կան ու հավանաբար ենթարկվելու են նույն ճակատագրին»:

«Մայիս ամիսից սկսած,– ասաց Ֆրանսիայի նախկին հյուպատոս Գիսը,– Հալեպից անցնում են հազարավոր մարդկանց շարասյուններ: Երկուերեք օր մնալուց հետո իրենց համար հատուկ սարքված տեղերում այդ տարաբախտները՝ մեծ մասամբ կանայք և երեխաներ, հրահանգ են ստանում շարժվելու դեպի Իդլիբ, Մընա, Ռաքքա, Դեյր էզ-Ջոր, Ռասուլ-Այն, Միջագետքի անապատները, բոլորի համոզմամբ՝ իրենց գերեզմանի համար հատկացված տեղերը»:

«Վան վիլայեթից հազարավոր այրի կանայք,– ասաց Հալեպի ամերիկացի հյուպատոս Ջեքսոնը,– առանց որևէ չափահաս տղամարդու ընկերակցության, թշվառ վիճակում ու կիսամերկ Հալեպին են մոտենում: Սրանք, ինչպես նաև արդեն անցած մյուս տասը քսան խմբերը, հինգ հարյուրից մինչև երեք հազար հոգուց բաղկացած շարասյուններ են, որոնք իրենց հետ տանում են աննկարագրելի թշվառ վիճակում գտնվող երեխաներին»:

Եվ նորից Ռոյսլերը.

«Խարբերդի հայերի վերաբերյալ տեղեկացա, որ տղամարդկանց կանանցից բաժանեցին քաղաքից հարավ գտնվող մի գյուղում: Տղամարդկանց ջարդեցին ու թողեցին ճանապարհի երկու կողմերում, որտեղից կանայք ստիպված էին անցնել»:

«Կրնաք հավատալ,– ասաց Արամ Անտոնյանը, որ հավաքել էր վերապրողների վկայությունները,– որ Դեյր էզ-Ջորի որբանոցին քանի մը հարյուր մանուկներ երբեք գոյություն չեն ունեցած»:

Գրեթե վերջին մոտ ու ճանապարհի ծայրին իշխանությունները կարծեցին, որ գտել են մինչև այդ անլուծելի թվացող հարցի լուծումը՝ ինչպես սպանել, առանց հետևում թողնելու մեռյալների դիակները: Ոչ թե որ դա նրանց մղում էր գիտակցելու, թե իրենք ինչ-որ ձևով հանցավոր են, այլ որովհետև կտորտանքների վերածված հարյուր հազարավոր մարմինները՝ ոսկորների վրա սևացած մաշ-

կով, ջրի մեջ լողալով կամ ձորերի խորքում մնալով, չնայած հետևից եկող շարասյուններին վհատեցնում էին ու մահվան պատրաստում, սակայն խափանում էին ճանապարհներով և երկաթուղով երթևեկությունը, մահվան ժահրով դեղնացնում ու ծանրացնում օդը, արաբների բողոքներն էին առաջ բերում, ուլքեր այլևս չէին կարող խմելու համար օգտագործել գետերի ջրերը, նաև համաճարակային հիվանդություններ էին առաջացնում: Այս բոլոր անպատեհությունները վերացնելու համար Դեյր էզ-Ձորի երեխաների սպանությունը կատարյալ ոճիր էր լինելու:

Մեսքենեից և արսուրյալների ճանապարհներին ընկած մյուս բնակավայրերից հավաքված որբերն անապատով քշվեցին դեպի Դեյր էզ-Ձոր: Պատկերացրեք՝ այլանդակված դեմքերով, ցնցոտիներով ծածկված և անապատի տոթի կամ ցրտի մեջ բոբիկ ոտքերով երերացող հարյուրավոր երեխաների մի շարասյուն: Արյունոտ, որդնած վերքերով պատված ուսերով, որոնց մտրակով կամ գավազանով դաղելով հետևից քշում էին հեծյալները: Մահացածներին կամ մահամերձներին նետում էին շարասյանն ուղեկցող սայլերի մեջ: Այն տեղը, ուր կարողացան հասնել, կոչվում է Աբուհահար: Ընդամենը երեք հարյուր երեխա կարող էր ոտքի վրա մնալ, մնացյալները, որոնք բազմաթիվ էին, փոխադրվում էին սայլերով: Անապատի եզրի լեռների ստորոտին զինվորները շարասյունը կանգնեցրին ու սայլերը դաշտում դատարկեցին: Զինվորներն այդ տեղը շրջապատեցին՝ սպասելով մութն ընկնելուն: Եվ մութն ընկնելուն պես անապատի թռչունները եկան: Արյան հոտից, հետո մեկը մյուսի թռիչքից և ավելի ուշ՝ կռռոցների աղմուկից ու ոսկորների վրայից խլիվված մսի թրխկոցից հրապուրված՝ արծիվներն ու անապատի ագռավները հարձակվեցին մարմինների վրա, որոնք նույնիսկ եթե դեռևս ողջ էին, այլևս պաշտպանվելու ուժ չունեին: Թռչունները նշան էին բռնում հատկապես աչքերին, այտերին ու շուրթերին՝ որքան մարմիններն սպառվում էին, այդքան ավելի եռանդով: Երկու օր շարունակ թռչունները երամներով իջան լեռների ստորոտի մսաթափ դաշտի վրա, իսկ երեխաները գոհ թողնվեցին սև ու պողպատե կտուցներին ու ճիրաններին: Այս պատմությունը սարսափած պատմեցին քոչվոր արաբները: Իսկ զինվորների հրամանատար կապրալ Ռահմեդդինի պաշտոնը բարձրացվեց՝ անսպասելի արագությամբ հասցնելով Ռաքքայի ոստիկանապետի աստիճանին:

Դեկտեմբերյան ցուրտ մի օր մյուս որբերին, ուլքեր Դեյր էզ-Ձորի որբանոցում հիվանդ ու սոված պառկած էին, բեռնեցին սայլերի վրա: Մահամերձներին նետեցին Եփրատի մեջ. գետը, որ տարվա այդ ժամանակ վարարել էր, արագորեն կլանեց սմբած մարմինները: Անապատում տասներկու ժամվա ճանապարհից հետո, առանց որևէ սննդի կամ ջրի, շարասյան հրամանատարը, որի մասին գիտենք միայն, որ անունն Աբդուլլահ էր, բայց նրան դուր էր գալիս, որ իրեն Աբդուլլահ փաշա կոչեն, երեխաներին բնաջնջելու երեք տարբեր միջոց էր գտել: Բայց քանի որ զինվորների հայացքներում վարանում էր նկատում, երկու տարեկան մի մանուկի ճանկեց ու ցույց տվեց մյուսներին. «Նույնիսկ այս լակոտին,– ասաց նա,– իր տարիքի բոլոր մյուս երեխաների նման պետք է անգթորեն սպանել: Մի օր կգա, երբ նա ոտքի կկանգնի, իր ծնողներին սպանողներին կփնտրի ու կցանկանա վրեժ լուծել: Մա այն շան որդին է, որ մի օր մեզ պիտի փնտրի՝ սպանելու համար»: Եվ մի քանի անգամ նրան օդի մեջ պտտելով կատաղած խփեց քարերին, տրորելով՝ նախքան մանուկը կհասցնեք տնքալ:

Սայլերի մի մասն իրար մոտ կանգնեցրին, դրանց մեջ որքան

կարելի էր շատ երեխաներ լցրեցին, իսկ մեջտեղում՝ պայթուցիկով լիքը մի սայլ, որը պայթելով, բոլորին ցրիվ տվեց՝ երեխաներին պարզապես մրուրի վերածելով: Քայլել անկարողների վրա դաշտում քարյուղով թաթախված չոր խոտ լցրեցին ու կրակ տվեցին: Իսկ մյուսներին, ովքեր կառքերի մեջ չէին տեղավորվել, քշեցին դեպի քարանձավները, որոնց մուտքը փայտերով ու խոտերով փակեցին և կրակ տվեցին՝ երեխաներին խեղդելով ու կապտած և ածխացած մարմինները քարայրների խորքում թողնելով:

Այդուհանդերձ, կատարյալ ռճիրն իսկ չի կարող լիովին անթերի լինել: Մի աղջիկ՝ Աննան, պատասպարվել էր քարանձավի անկյունում, որտեղ ժայռի մեջ եղած ճեղքի շնորհիվ օդի հոսք գտավ: Այսպիսով վերապրեց և, կրակը մարելուց մի օր ու գիշեր հետո դուրս եկավ: Մի քանի շաբաթ թափառելով՝ Ուրֆա հասավ, այնտեղ հայ փախստականներ գտավ ու նրանց պատմեց մանկանց կոտորածի մասին:

Իսկ երրորդ շրջանակից լսվում է Ռազմածովային նավատորմի նախարար Ջեմալ փաշայի ձայնը, ով խուճապի էր մատնվել Եփրատի վրա լողացող դիակների քանակության պատճառով: Իսկ հետո զայրացել, որ շարապյունների երթուղիները կարող են երկաթուղու երթուղիները խանգարել: Այն ժամանակ թուրք իշխանությունները հասկացան, թե որքան էլ կատարելապես հղացված լինեք հայերի բնաջնջման համակարգը, այնուամենայնիվ այն մի թերություն ունեք. հետևում մնում էին սպանվածների մարմինները: Մի թերություն, որը Դիարբեքիի վալի Ռեշիդ փաշան փորձեց ուղղել որքան կարող էր. «Եփրատը կապ չունի մեր վիլայեթի հետ: Գետի վրա լողացող դիակները հավանաբար Էրզրումի ու Խարբեքիի վիլայեթներից են գալիս: Այստեղ մահացողները քարանձավների խորքն են նետվում կամ, ինչպես ավելի հաճախ է պատահում, քարյուղով ցողվում և այրվում են: Քչերն են թաղվելու բավարար տեղ գտնում»:

Վերադառնում ենք առաջին շրջանակին.

– Դուք չտեսաք կարավաններուն միացման տեղերը,– ասաց Հրաչ Փափազյանը,– կամ ավելի ճիշտ ինչ որ մնացեր էր անոնցմե: Դեյր էզ-Ջորին մեջ: Լաթերեն պատրաստված հազարավոր վրաններ: Մերկ կիներ և երախաներ, անոթութենն այնքան նիհարցած, որ իրենց ստամոքսը այլևս չէր ընդուներ կերակուրը: Գերեզմանափորերը սայլերու մեջ կնետեին մեռյալներ և մահամերձներ միատեղ, որ ժամանակ չկորսնցնեն: Գիշերը, ցուրտի պատճառով, ողջ մնացածները մեռյալները իրենց վրա կղնեին, որ տաքնան: Մայրերու համար լավագույն բանն էր բեղնիի մը հանդիպելը, որը իրենց երախան առներ ու փրկեր այդ հսկա գերեզմանոցեն: Արնալուծը անշնչելի կըներ օդը: Շուները դունչերով կքրքրեին մեռյալներուն պատռված փորերը: Միայն հոկտեմբեր 1915-ին Ռաս-ուլ-Այնեն ավելի քան քառասուն հազար կիներ անցան, զինվորներու հսկողության տակ, առանց որևէ կարող այրմարդու: Մարտիրոսացած կիներու խաչակրություն: Երկաթուղիին երկայնքով ամբողջ ճամփան բռնաբարված կիներու ճեղքված դիակներով ցանված էր»:

«Մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար հայերից, որոնք Օսմանյան կայսրությունում էին ապրում,– ասաց պատերազմի Յոհաննես Լեփսիուսը,– գրեթե մեկ միլիոն չորս հարյուր հազարն աքսորվեցին: Մնացյալ չորս հարյուր հիսուն հազարից մոտավորապես երկու հարյուր հազարն աքսորից գերծ պահվեցին, հատկապես Կոստանդնուպոլսի, Ջմյուռնիայի և Հալեպի բնակչությունը: Ռուսական զորքերի առաջխաղացումը փրկեց մյուս երկու հարյուր հիսուն հազարի կյանքերը, ովքեր ապաստանեցին Ռուսահայաստանում, ուր

նրանց մի մասը տիֆից կամ սովից մեռավ: Մնացածներն իրենց կյանքը պահպանեցին, բայց հավիտենապես կորցրին իրենց ծննդավայրերը: Գրեթե մեկ ու կես միլիոն հայ աքսորյալներից ընդամենը տասն առ հարյուրը հասան Դեյր էզ-Ջոր՝ շարասյունների վերջնական կետը: 1916-ի օգոստոսին նրանց ուղարկեցին դեպի Մոսուլ, բայց մեռնելու էին անապատում, ավազակույլ եղած կամ քարայրներում խցկված, ուր մեռյալներն ու մահամերձները միատեղ հրի մատնվեցին»:

Լռեցին: Շրջանակները սեղմվեցին Արմեն Կարոյի շուրջը: Նա իր հայացքն ուղղեց դեպի Շահան Նաթալին, դեպի Շավարշ Միսակյանը, հետո դեպի բոլոր մյուսները: Լուսանկարները վերցրեց և առաջին շարքում նստածներին պարզեց, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պատգամի:

– Եվ սակայն, – հոգնած կրկնեց, – կիները և երախաները մի՛ սպանեք:

Մանկությանս օրերի հայ ծերունիներին իրենց ապրած տեղը պատահական էր թվում: Ոմանց նույնիսկ ապրած ժամանակն էր պատահական թվում, բայց ավելի դժվար էր ժամանակին խաբելը: Եվ հենց այդ պատճառով էլ ժամանակը լուսանկարներով ալբոմների էջերից, հին զգեստների միջից կամ թևատակերից երևալով՝ ի վերջո, նրանց մեկ առ մեկ դիպվածի վերածեց:

Քանի որ տեղը, ուրեմն, ընդամենը պայմանավորվածություն էր, ինչը, երբ հանգամանքները շատ նախահարձակ չէին, կարող էիր հաշվի չառնել, իմ ծերունիները լայն տարածություններով էին հմայված: Խոսում էին այնպես, կարծես կարող էին միաժամանակ մի քանի տեղում լինել: Մա թերևս նրանց օգնեց վերապրել այն ժամանակ, երբ վերապրելն ամենադժվար բանն էր թվում, բայց նաև օգնեց մահանալ այն ժամանակ, երբ այլևս անելու շատ բան չկար:

Այդ տեսակետից պապերս, սակայն, տարբեր վերաբերմունք ունեին: Մեղրակ մեծ հայրս՝ մորս հայրը, կարծես երբեք չէր ձանձրանում: Նրա մեծ եղբայրը՝ Հարությունը, իր աչքի առջև սրի հարվածից էր մեռել, ինչն էլ իրեն թելադրել էր փախչել ու կյանքը փրկել: Քանի որ ուրիշ մեկն իր համար էր մեռել, համարում էր, որ մի կերպ ապրած իր կյանքն իրենը չէր կամ միայն կիսով էր իրենը, ասենք՝ փոխ առնված կյանք էր: Քանի որ մեկ ուրիշը մեռել էր, որպեսզի ինքն ապրի, այդ պարտքը վերադարձնում էր՝ իր հերթին ուրիշների համար ապրելով: Ապրում էր իր աղջիկների համար. Եղիսաբեթի՝ մորս, ու Մարոյի համար, ում կոչել էր իր քրոջ անունով, որը թաղված էր Եփրատի ջրերի մեջ, անհող գերեզմանում: Ապրում էր աղքատ երեխաներին նվերներ տալու, խանութի տղաներին հարսանիքից առաջ օժիտ պարգևելու, տկլորներին հագցնելու և սովածներին կերակրելու համար: Անտոնեսկուի կառավարության ժամանակ կերակրեց աշխատանքային ճամբարներում սովետական բանակի հայ գերիներին: Լեզեոնային կառավարության ժամանակ ապտակ ստացավ, որ իբր թե հրեա էր, և միայն վզից կախված խաչն ավելի մեծ նեղություններից փրկեց նրան: Համայնավարական կառավարության հաստատումից հետո ապտակ ստացավ, որ իբր թե լեզեոնական էր, և այդ անգամ վզից կախված խաչն այլևս օգտակար չեղավ, այլ՝ ընդհակառակը: Բայց, ինչպես ժողովողն է սսում, ջուրը գցած լավությունը հետ է գալիս, և հայ գերիներից մեկը, որին ինքը ողորմություն էր տվել, վերստին հայտնվեց որպես Կարմիր բանակի սպա, ուստի նրան պատահած վատ բաները միայն ապտակ ստացած այտերի կարմրությունն ու խանութների բռնագրավումը եղան, համայնավարներն իրեն թո-

ղեցին իր տներից մեկը և, իբրև շահագործող դասակարգի ներկայացուցիչ, ներողամտություն ցուցաբերելով՝ բանտ չուղարկեցին: Այն, որ անկարելի էր ապացուցել, թե ում էր նա շահագործել, դա ուրիշ խնդիր էր, բայց համայնավարներն այդպիսի նրբությունների համար ժամանակ չէին վատնում: Նրանց համար բավական էր, որ մեծ մայրս մուշտակներ էր հագնում, տանը դաշնամուր ունեին, ամառները Օլանեշտ՝ էին գնում հանգստանալու և, դեռ դա քիչ էր, մեծ հայրս կիրակի օրերը լաուտարներով խնջույքներ էր սարքում Փաշայի բացօթյա ռեստորանում: Երբ Կրայովայի «Բուզեշտ եղբայրներ» լիցեյում գիշերային պահակ էր, Սեդրակ մեծ հայրս անքուն գիշերներին բավական ժամանակ ունեցավ այդ բոլորի մասին մտածելու: Ինչպես օրինակ, 1942-ին ստացած այն ծանուցման ժամանակ, որով մարշալի հրամանով ամբողջ ընտանիքով նանսենյան այլ հայրենագուրկների հետ միասին տարվելու էր Թըրքուժիուի ճամբար: Հրամանը վերացվեց, ու մեծ մայրս սնդուկներից հանեց հաստ հագուստները և իր ու երկու աղջիկների բրդե գուլպաները, բայց փայտե մի ճամպրուկում պահեց Սեդրակ մեծ հորս հագուստները, քանի որ նա ճամբար նետվելուց փրկվելուց հետո զինվորագրվելու էր: Հրաժեշտ տվեց ընտանիքին ու 1944-ի գարնանը Բուխարեստ գնաց, որտեղ Ռումինական բանակի նրա զինվորությունը՝ նանսենյանների վաշտի մյուս նորակոչիկների հետ միասին, ուղիղ երեք օր տևեց: Թե ինչպես տեղավորվեցին վաճառականի շարժումները գորանոցային կոշիկների ու վիզը սեղմված ճարմանդների մեջ, պատմությունը չի ասում: Վաշտը երկու օր զինավարժություն արեց, իսկ երրորդ օրը Հյուսիսային կայարանի մոտի գորանոցներում ապաստանած, առաջին իրական գորավարժությունը կատարեց՝ դիմացի կողմից կայարանի ռաբակոժումը դիտելով: Բարձիթողի գորանոցով, ռազմական հանդերձանքն ավելի շուտ վաճառելու, քան պատերազմում օգտագործելու տրամադիր, ինչքան որ քաջ, նույնքան էլ շփոթված նորակոչիկներով հայրենագուրկ-ռումինական վաշտը՝ կազմված հայ գորակոչիկներից, ինքնին կազմավորվեց, իսկ հայերը, տեսնելով, որ ոչ ոք այլևս շարք կանգնել չէր հրամայում, ցրվեցին:

Ուստի Սեդրակ մեծ հայրս մի քանի տարվա ընթացքում այդքան տարբեր վիճակներից անցնելով, հերթով՝ հարստացած և * Լեռնային ջրակլիմայական կայան Ռումինիայում:

աղքատացած, ապտակված, հրեացված, ճամբարում ներկայված, գորակոչված ու գորացրված, նորից ապտակված, բուրժուացած ու ապարբուրժուացած, լիովին իրավունք ունեցավ այս աշխարհն անհասկանալի համարելու: Իսկ, ըստ մեծ հորս գաղափարի, նա, ով կարծում էր, թե աշխարհն այլ կերպ է, քան անհասկանալի, ոչինչ չէր հասկանում: Եվ, ապացուցելու համար, թե որքան անհեթեթ է աշխարհը, տվեց իր ձեռքի տակ ունեցած վճռական ապացույցը՝ սեփական մահվան օրինակը: Նախ Հին շուկայից վերադառնալիս Պուրչիկարի աղբյուրի առջև թույլ տվեց, որ մի մեքենա խփի իրեն, հետո զլխիվայր ընկավ Բարաց փողոցի իր թիվ 4 տան տանիքից, երբ փորձում էր քիվը նորոգել: Միայն երրորդ անգամ հաջողացրեց, 1985-ի ձմռանը, երբ ցրտից մեռավ, որովհետև համայնավարները գազի խնայողություն էին անում և օրերով կտրում էին գազը, այն էլ՝ ամենախիստ սառնամանիքի ժամանակ, որպեսզի խնայողությունը հնարավորինս շատ լիներ:

Քանի որ մի մարդու համար, ով ինչպես կարն աստառի մեջից, բազմիցս անցել էր մահվան առջևից, թվում էր, թե ամենաանհեթեթ բանը համայնավարական պետության արած գազի խնայողության պատճառով մահանալն է, Սեդրակ մեծ հայրս հանգավ՝ դեմքի վրա դաջված հանդարտությամբ: Թաղվեց Կրայովայի կա-

թուրիկական գերեզմանոցում, ոչ թե այն պատճառով, որ կաթոլիկ էր, այլ որպեսզի ամեն ինչ անհասկանալի մնա:

Փոխարենը Կարապետ մեծ հայրս համարում էր, որ աշխարհում ամեն ինչ իմաստավորված է: Ի տարբերություն Մեղրակ մեծ հորս, որ սովորաբար դպրոցին հատկացված տարիները որբանոցներում և աշկերտությամբ էր անցկացրել, Կարապետ մեծ հայրս հաճախել էր Կոստանդնուպոլսի երկրագործական լիցեյը, ինչը որ մեծ բան էր այդ դարի սկզբի համար: Հմուտ, հնարամիտ և ուսումնասեր էր, և ի հուսահատություն Արշալույս մեծ մորս՝ աշխարհում ոչ մի բանի դիմաց գիտությունը չէր զիջում վաճառականությանը: Հետևաբար, մինչ Մեղրակ մեծ հայրս սուրճից, կակաոյից ու չամիչից դրամ էր կուտակում, Կարապետ մեծ հայրս, որպես վաճառական, միշտ սնանկ էր: Կամ կարող էր լինել, եթե Սահակ Շեյթանյանը՝ նրա քենակալը, իր գլխու թողներ: Բայց միշտ սնանկ լինելը նրա միակ արհեստը չէր: Կարապետ մեծ հայրս դպիր էր եկեղեցում, ջութակահար, նոտագրող, մոտոցիկլիստ, գեղագիր, լուսանկարիչ, նկարիչ, երաժշտության ու հայերենի վարժապետ, դիմանկարիչ, ասեղնագործ և ի հարկին՝ լաուտար, այսինքն զբաղվում էր այն բոլոր արհեստներով, որոնցից շահ չուներ: Մի խոսքով, իմ տոհմն աշխարհի հետ քվիտ էր. Մեղրակ մեծ հայրս հավաքում էր, Կարապետ մեծ հայրս՝ շռայլում: Համայնավարությունն ամեն ինչ հավասարեցրեց. Մեղրակ մեծ հայրս այլևս հավաքելու բան չունեցավ, իսկ Կարապետ մեծ հայրս՝ շռայլելու:

Բայց քանի որ Կարապետ մեծ հորս համար դրամով չափելու աշխարհիկ բաների մասը չնչին էր, համայնավարության հաստատումով նրա կյանքը շատ չփոխվեց: Փաստորեն, անցյալում արածների համեմատ Ֆոկչանի հայերի կյանքը շատ չփոխվեց: Ով ժամագործ էր, ժամագործ մնաց: Ով կոշկակար էր, կոշկակար մնաց: Ով նպարավաճառ էր, նպարավաճառ մնաց: Ժամկոչը ժամկոչ մնաց, բժիշկը՝ բժիշկ: Եվ, անշուշտ, քահանան էլ եկեղեցում փարաջան չհանեց: Թեև արհեստները նույնը մնացին, սակայն արհեստավորները տուժեցին: Որովհետև ժամագործների նորոգած մեխանիզմները շվեյցարականից վերածվեցին ռուսականի, լաքե կոշիկների ու կրունկով և քուղով տուֆլիների տեղը բռնեցին ռուսամանները, որը նորոգում էին այնքան, մինչև ներքանը երեսից ավելի հաստ դառնար: Հրուշակեղենի խանութները մնացին, բայց դարակներից անհետացան նուրբ խորտիկները, *լոխումները*, *թահիներ* հավվան, *լեբ-լեբիները*, *Վան Հուտեն* կակաոյի տուփերը, սուրճի պարկերը, շաքարով պատված արևադարձային մրգերը, շոկոլադով նուշերը. փոխարենը երևացին յուղով պատված խմորեղեններ, կարծր վաֆլիներ ու չափազանց չոր բիսկվիտներ, որոնց վրայից կրեմը պոկվում ու փշրվում էր: Միայն սառնաշաքարի կտորները, լուսե ճառագայթի մման, համառորեն նախկին փայլից մի փոքր նշույլ էին պահում: Տեր Տաճատ Ասլանյանը փարաջան քշտած՝ ժամկոչ Արշակի օգնությամբ եկեղեցու գրքերը և արժեքավոր իրերը թաքցրեց հին նկուղներում: Մի քանի տարի հետո խնամքով մեկ առ մեկ հանեցին այդ բոլորն ու վերջին ամենաարժեքավորը՝ արծաթե թռչունը, որի կտուցից կնունքի ջրի մեջ էր կաթկթում մյուռոնը, որ ամեն յոթ տարին մեկ նորոգվելով՝ մնացել էր 301-ին Գրիգոր Լուսավորչի օրհնած յուղից: Չանգն ավելի լուռ ու մտասույզ էր: Արշակը զանգակատուն էր բարձրանում ոչ թե պարանը քաշելու, այլ զանգի հետ խոսելու, որ պատասխանում էր տարբեր խորությունների լռություններով, ինչպես մի երգեհոն, որի փողերով ոչ թե նվագում, այլ շնչում ես: Հետո նայելու համար հարավային պատուհանից, այնքան նեղ, որ կարողանաս ընդամենը մի հրացան դուրս

հանել, բայց բավական բարձր՝ որ տեսնես մինչև քաղաքի ծայրը՝ թե արդյոք ամերիկացիները գալի՞ս են: Հարավային պատուհանից ամերիկացիները չերևացին, բայց հյուսիսային պատուհանից Տեկուչի ճանապարհով երևացին ռուսները: Իսկ ավելի քան տասը տարի անց, որի ամբողջ ընթացքում հարավային պատուհանը լուռ մնաց, դարձյալ հյուսիսային պատուհանից, այժմ թաղականության անդամների հետ, որոնց թողեց հերթով նայել, Արշակը հետևեց, թե ինչպես էին նույն Տեկուչի ճանապարհով ռուսական զորքերը հեռանում: Բայց այլևս ուշ էր, կարմիր դրոշներն արմատ էին գցել, և նրանց մուրճ ու մանգաղով զինանշանը ծեփի հետ նույնացել էր և միայն պարսպի հետ միասին կարելի էր ճակատամասերի վրայից հանել: Շատ տեղին ասաց մյուսներից ավելի երկար աչքը պատուհանին կայցրած Սահակ Շեյթանյանը. «Մեր ազատագրման համար ոչ թե իրենք պետք է երթան և մենք մնանք, այլ մենք երթանք և իրենք մնան»: Անձրևոտ գիշերվանից հետո մշուշոտ առավոտ էր, ռուս զինվորներն արագորեն անհետացան. հողը ցեխոտել էր նրանց սապոզները, ուստի փոշի չթողեցին իրենց հետևից: Եվ բժիշկները բժիշկ մնացին, բայց այնպես, ինչպես լինում է յուրաքանչյուր պատերազմում՝ սոված, արյունոտ վերքերով, տիֆից դողացող մարդկանց խառնիխուռն թաղելուց հետո, այժմ ծնունդներին վերջ չկար: Գլխիվայր շրջված աշխարհում, որտեղ արևն արևելքում էր մայր մտնում, երեխաներն արդեն ծերացած էին ծնվում:

Ուրեմն, Կարապետ Ոսկանյան մեծ հայրս բոլոր պատահելիքներից հավասար հեռավորության վրա էր մնում: Ցանկանում էր աշխարհը հասկանալ, ուստի համարում էր, որ դա կրկնվելու ենթակա է և թողնում էր, որ իր փոխարեն օրինակներն ապրեն: Տանջանքի նրա օրինակը Կոմիտաս վարդապետն էր, որին սկսել էր նմանվել ծերանալու հետ, ուստի երբ առաջին անգամ տեսա Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան վանականների պահած Կոմիտասի մահադիմակը, արտակարգ նմանությունից ցնցվեցի: Մեծ հորս համար հայր Կոմիտասը հավանաբար ոչ միայն տանջանքի օրինակ էր, այլև՝ խենթության:

Հաճախ անշարժ նստում էր և իր համար քրթմնջում: Չէինք հասկանում, թե ինչ էր ասում. մեծ մայրս մեզ չէր թողնում մոտենալ: Այդ էջերն սպիտակ մնացին *Շշուկների մատյանում*: Մի ուրիշ անգամ իր սենյակում փակվում էր ու երգում: Բարիտոն ձայն ուներ, որ աստիճանաբար բարձրանում էր դեպի տենորի սուր նոտաները, ճիշտ Կոմիտասի ձայնի պես, որը Վենսան դ'Էնդիին, Կամիլ Սեն-Սանսին և Կլոդ Դեբյուսսին հիացրել էր: Երգում էր ու ջութակով նվագակցում՝ կնտնտոցով մի քանի լարերի միաժամանակ խփելով, կարծես մի ամբողջ քառյակ լինել:

Կոմիտասին նույնպես, ինչպես իր ընկերներին՝ Դանիել Վարուժանին, Ռուբեն Սևակին ու Միամանթոյին, ձերբակալեցին 1915-ի ապրիլի 24-ին: Հազին մնաց վարդապետի իր սքեմը, առանց վեղարի, որ խորհրդանշում է Արարատ լեռը և որը կրում են Հայոց եկեղեցու բոլոր ներկայացուցիչները՝ կաթողիկոսից մինչև վանական: Վեղարը և թիկնոցը տվեց շարասյան մեջ քայլող չքավորներին: Մեքենաներով նրանց տարան մինչև Չանկըրըի մոտակայքը: Կոմիտասն ամբոխին էր խառնվում՝ փորձելով ըստ իր կարողության ամոքել տառապանքը՝ մարդկանց հորդորելով Աստծո հանդեպ հավատը պահել: Գիշերը մենակ էր մնում և սկսում մրմնջալ: Սկզբում ճանապարհի նրա ընկերները կարծում էին, որ աղոթում էր, բայց ոչ թե աղոթում, այլ խոսում էր, իսկ եթե իր գրուցակիցն Աստվածն էր, ապա վանականի համար անսովոր խոսքերը հան-

դիմանական, մի տեսակ հակառակ շրջված սաղմոսներ էին թվում: Իսկ մի օր տեսավ ծննդաբերության պատրաստվող մի կնոջ, բայց մինչև իր մոտենալը զինվորներից մեկը սրով պատահաբար կնոջ ուռած ու թայրտացող փորը: Այդ պահից, Կոմիտասը, ինչպես Անդրեյ Ռուբլովը հինգ դար առաջ թաթարների դաժանությունների պատճառով, պապանձվեց: Միայն ևս մի անգամ խոսեց, մյուսները կարծեցին, թե կատակում է, բայց հետո հասկացան, որ Կոմիտաս վարդապետի մտքի սանձերը թուլացել էին: Կանգնեց ու շարասյան իր ընկերներին ասաց. «Մի՛ աճապարեք: Թող զինվորներն առաջ անցնին»: Հետո, երբ Դանիել Վարուժանին տանելու և սպանելու էին, Կոմիտասը վերջին անգամ ձայնեց: Փաստորեն, ոչ թե խոսեց, այլ երգեց: Նախ՝ սաղմոսներ. «Մեղա՛, Աստված», բայց խիստ ձայնով, կարծես սպասելով, որ Աստված մեզանից մեղայական խնդրի, հետո՝ *Կռունկը*: Եվ, երբ վերջացրեց, սկսեց ծիծաղել: Նրա քրքիջը լավեց ամբողջ գիշերը՝ խզզան ու ջղային, փտած մի գործվածքի պես, որն անընդհատ ճղում էս՝ ծալելով ու նորից պատռելով: Նրանցից շատերին՝ ներառյալ Դանիել Վարուժանին ու Միամանթոյին, այն ժամանակ սպանեցին: Օդուզ բեյը, չիմանալով ինչ անել նրա հետ, ի վերջո Կոմիտաս վարդապետին հետ ուղարկեց Կոստանդնուպոլիս: Բեյը հմուտ էր ընկնող կամ փախչող մարդկանց սպանելու մեջ. սպանում էր աղոթող, աղերսող, արտասովոր կամ անիծող մարդկանց, բայց չգիտեր ինչպես սպանել ծիծաղող մի մարդու:

Իսկ Կոմիտասն անընդհատ ծիծաղում էր, անսովոր մի ծիծաղով, որ իր վրա էր վերցնում տառապյալների արցունքները, իսկ մարդասպաններին արհամարհում. այդ ծիծաղը ցույց էր տալիս, որ Կոմիտասի մեջ սպանելու ոչինչ չէր մնացել:

Այլևս երբեք չսթափվեց: Ընկերները նրան Փարիզի մոտ մի առողջարան ուղարկեցին: Քսան տարի անց մեռավ, իսկ ծիծաղն ու լացը հետմահու հաշտվեցին նրա դեմքի վրա: Նրա դեմքը հանգիստ էր, ինչպիսին էր նաև մեծ հորս դեմքը, կարծես մահը հանգրվան լինի, կարծես հենվում էս գովացնող ջրհորի պատին ու ներս նայում:

Կարապետ մեծ հայրս *Կռունկ* էր երգում, այն երգը, որ ծննդավայրի մասին է խոսում, հետո ոչ թե ծիծաղում, այլ լռում էր: Գիտեմ ինչ էր անում, որովհետև հետքերը կտավի վրա էին մնում, մեծ հորս քրքիջը գույներից էր բաղկացած, ես կարծում էի, թե անիմաստ էր ներկում՝ վրձնով, ուղղակի ներկապանակի մեջ թրջած մատով կտավին քսելով կամ, երբ անկարելի էր քրքջոցը կասեցնել, ներկի պարկուճն ուղիղ կտավի վրա ճզմելով: Գերակշռում էին սևն ու նարնջագույնը, իսկ մեծ հայրս ուշադրությամբ գնում էր դրանք, այնպես, ինչպես ինքն իրեն հասկանալ էր փորձում: Աշխարհը հասկանալու իր ջանքերի մեջ մեծ հայրս ամեն ինչի համար իր մեթոդն ուներ: Ինքն իրեն, օրինակ, վերծանում էր գույներով: Մարդն իր էներգետիկ լիցքն ունի: Էներգիա՝ նշանակում է նախ և առաջ լույս: Լույսը գույների բաղադրություն է, ըստ գույների լուսապատկերի կարող էս հասկանալ, թե լույսն ինչ հեռավորությունից է գալիս, ինչ առարկայից է բխում, օրվա որ պահն է: Դա վերաբերում է նաև մարդուն. նրա առջև բյուրեղյա մի բուրգ էս դնում ու դիտում նրան, սա լուսապատկերն է: Ահա՛՛ էս եմ, – ասում էր մեծ հայրս, մոտիկից նայելով ջղաձիգ գույներով ակոսված թղթին, նույնիսկ դիպչելով՝ տեսնելու համար ոչ միայն գծերի գույնը և սլացիկությունը, այլև վրձնահարվածի ողորկությունը կամ կոշտությունը: Ի միջի այլոց, սրանք նրա ներսուզվելու հազվադեպ պահերն էին: Այլ առիթներով ամեն ինչ դիտում էր համբերատար ու

բծախնդիր: Նույնիսկ երբ ուտում էր, կերակրի բնույթը հասկանալու համար ամեն պատահող ծամում էր, համբելով մինչև երեսուներեքը՝ ծամվածքների համար անհրաժեշտ թիվը, ասում էր նա, որ պետք է մի կողմից հասկանա յուրաքանչյուր սննդի համը և իմաստը, իսկ մյուս կողմից՝ կերակուրը բավարար չափով մանրացնես ու ստամոքսդ պահպանես: Ճիշտն ասած, բոլոր մյուս կետերից հավասարաչափ հեռու այդ կետը նրանից էլ նույնչափ հեռու էր: Այն տեղից, որտեղից ամեն ինչին դրանց արտաքին կողմից կարելի է նայել, նույն հետաքրքրությամբ ու սնեռումով ինքը քեզ դիտելը, ինչպես զննում էս պարտեզի ծառերը կամ պատերազմի ժամանակագրությունը, նույնպես մի տեսակ խենթություն է: Միայն թե, ինչպես հայտնի է, մեծ հորս տառապանքի օրինակը Կոմիտաս վարդապետն էր, բայց ոչ թե նրան ընդօրինակելու, այլ արտացոլելու համար: Մինչ Կոմիտաս վարդապետի խենթությունը ներսից էր, Կարապետ մեծ հորս խենթությունը դրսից էր, առարկաների վրայից:

Ուստի, ասում էր մեծ հայրս, ով համարում էր, թե աշխարհը գոյություն ունի լոկ հասկացվելու համար, երբ ինքը քեզ անգիր ես անում, երբ այնքան կանխատեսելի ես դառնում, որ կարող ես ինքը քեզ սկզբից մինչև վերջ, նույնիսկ հանգերով բանաստեղծության պես արտասանել, այդ ժամանակ մահվանդ պահը եկել է:

Եթե, այս աշխարհի միջից անցնելով, Կարապետ Ոսկանյան մեծ հայրս հասկանում էր, իսկ Սեդրակ Մելիքյան մեծ հայրս չէր հասկանում, Սահակ Շեյթանյան կնքահայրս տուժում էր: Եվ, եթե Կարապետ մեծ հորս համար առաջին հասկացողությունը, այսինքն ինքնահասկացողությունը, գալիս էր խաչաձևված գույների հետ հանդիպումից, իսկ Սեդրակ մեծ հորս համար ինքնահասկացողությունը գալիս էր առատորեն ստացած ապտակների հետ հանդիպումից, Սահակ Շեյթանյանի համար ինքնատուժումը գալիս էր Յուսուֆի հետ հանդիպումից:

ՈՒԹԵՐՈՐԴ

ՅՈՒՍՈՒՖԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: *Շշուկների մատյանում* երևակայական գործող անձինք չկան, քանի որ բոլորն այս աշխարհում գոյություն ունեցան՝ իրենց տեղով, ժամանակով և անունով: Միայն մի գործող անձ կա, որ կարող է երևակայական թվալ, որովհետև նրա գոյությունը *Շշուկների մատյանը* վերածում է աստիճանական մի իրականության, որ բազմապատկվում է ինքնին, ինչպես դեմոնաց դրված երկու հայելի: Հաճախ ես գրում եմ *Շշուկների մատյանի* պատմիչի մասին: Իմ պատմության մեջ պատմիչը *Շշուկների մատյանի* մասին է պատմում: Իսկ այս նոր պատմված գրքում, վերստին հայտնվում է պատմիչը, որը պատմում է: Նա պատմիչի և նրա պատմության մասին է պատմում: Եթե շարքը հակառակ ուղղությամբ շրջվի, ու վերջին պատմիչին հասնենք, ով ինքն իրեն նկարագրելու թուլությունը չունի, և նրանից դեպի ինձ գանք, այդ ժամանակ կունենանք երազը, հետո՝ երազի երազը և այսպես շարունակ: Սակայն գրողի մասին գրելով, իսկ նա էլ իր հերթին գրելով՝ կռացած այն ձեռագրի վրա, որտեղ գտնվում է հեղինակ կոչված գործող անձը, կարծես աստիճանավոր մի գառիվայրում լինենք՝ ազուցված փայտե մատրյոշկաների նման, որ ծերունի Մուսայանն իր հետ բերել էր Սիբիրից՝ տարիների շարքը խառնելով ու մոռանալով, որ այդ ժամանակամիջոցում իր որդի Առաքելն արդեն զինվորագրվելու երիտասարդ էր:

Այդքան իրական գործող անձանց մեջ որոշ անուններ պատմության գրքերի մեջ էլ կգտնեք, այլ անուններ՝ միայն *Շշուկների մատյանում*: Ինքը՝ Մատյանը թեև շատ հաճախ անցյալի մասին է խոսում, պատմության գիրք չէ, որովհետև պատմության գրքերը հատկապես հաղթականների մասին են խոսում. այն ավելի շուտ սաղմոսների ժողովածու է, որովհետև ընդհանրապես պարտվողների մասին է խոսում: Իսկ մատյանի գործող անձանց մեջ գոյություն չունեցած մեկն էլ կա և, ի հեճուկս նրա կամ գուցե հենց այդ պատճառով, նա անուն ունի՝ կոչվում է Յուսուֆ: Այս Յուսուֆն ընդամենը փոխ առնված մի անուն է եղել և *Շշուկների մատյանում* է գտնվում այն դեպքի բերումով, որ թեև *Մատյանի* կառուցվածքի մեջ չէր մտնում, սակայն նա այն բանալին է, որը դարավերջի ամենաողբառատ սենյակի դուռն է բացում՝ դատարկ, եղունգով ճանկոտված պատերով, քանդված հատակով, թմբի վերածված հողով մի սենյակ, այնպես, ինչպես լինում են հապճեպ պատրաստված գերեզմանները: Իսկ ամենահապճեպ պատրաստվածները զանգվածային գերեզմաններն են:

Ողջերն ու մեռյալները պատկանում են երկնքին ու հողին: Միայն մահամերձներն են ամբողջությամբ մահվանը պատկանում: Մահը ճեմում է նրանց մեջ, ասես կարեկից է, մահամերձ լինելը մի վիճակ է, ինչը մահը ջանք է թափում շատ շուտ չընդհատել: Դա նրա թարմ վարսակն է: Մահամերձ վիճակը մահվան հետ հաղորդակցություն է: Մամուրայից մինչև Դեյր էզ-Ջոր, ավելի քան երեք հարյուր կիլոմետր տարածության վրա, մի ամբողջ ազգ անցավ այն յոթ օղակների միջով, այսինքն մահվան հետ հաղորդակցության ճանապարհով: Որի վերջում Մահակ Շեյթանյանը Յուսուֆին հանդիպեց:

ՄԱՄՈՒՐԱ: ԱՌԱՋԻՆ ՕՂԱԿԸ: Ըննապարհն ուղիղ էր ընթանում, երկաթուղու երկայնքով: Հայերի շարասյունները, որ հավաքվել էին տարբեր տեղերից՝ եվրոպական Անատոլիայից, Զմյուռնիայից, Իզմիրից, Ադրիանուպոլսից կամ արևմտյան Անատոլիայի վիլայեթներից, Տրապիզոնից, Էրզրումից, Խարբերդից, առաջին օղակ էին մուտք գործում քայլելով: Հեռվից ուլստագնացներ էին թվում

նայելով, թե ինչպես էին քայլում իրար սեղմված ու գլուխները խոնարհած: Միայն թե ուխտագնացներին իրենց հավատն էր առաջ մղում, այլ ոչ թե զինվորները, ովքեր հետևից հրում էին ձիերի դնչերով կամ ցրվածներին մտրակելով՝ շարասյուն վերադարձնում: Սահակ Շեյթանյանի ընտանիքը հինգ հոգուց էր բաղկացած՝ մեծ մայրը, ծնողները, ինքը և փոքր քույրը: Ավելի մեծ մյուս երկու երեխաները՝ Սիմոնն ու Հայկուհին, ծածուկ Կոստանդնուպոլիս էին ուղարկվել: Նրանց մայրը՝ Հերմինեն, կրակոտ կին էր: Դեռևս ոտքի վրա պինդ էր կանգնում, բազուկներով գրկում էր իր երեխաներին ու շարասյան մեջտեղում քայլում էր ուղիղ՝ ձիերի սմբակներից նրանց պաշտպանելու համար: Նաև ճամփեզրին ագռավների հոշոտած դիակների տեսարանից նրանց գերծ պահելու համար: Ռուբենը՝ հայրը, շապիկի տակ դրամ էր պահում: Դրա մի մասով կարողացան տոմսեր ձարել, ավելի ճիշտ՝ Իզմիրի կայարանապետի բարյացակամությունը գնեցին և գնացք նստեցին, որով էսքիշեհիր-Կոնիա-Բոզանտի-Ադանա գիծը հատեցին մինչև Մամուրա տանող ճանապարհի կեսը, որտեղ գնացքը կանգ առավ երկայթուղին փակող բանակի հրամանով: Բայց գնացքի կանգ առնելը, նույնիսկ էթե քարքարոտ արահետները կամ տոթ դաշտը կտրող ճանապարհին ուժասպառ էին լինելու, նրանց կյանքը փրկեց, որովհետև անասնատար վագոնները, որտեղ խցկվել էին, տարողունակ չէին, ուտելիքը վերջանալու վրա էր, ու ոչ ոք ջուր չէր տալիս: Վագոններում մնացած մեռյալները նոր հոգին ավանդածներն էին, քանի որ ճանապարհի վրա մեռածներին վագոններից հողաթմբի երկայնքով դուրս էին նետել:

Ուրեմն, կրկնակի բախտավոր եղան: Նախ, որովհետև ստիպված չէղան հարյուրավոր կիլոմետրեր քայլել, իսկ երկրորդ՝ որովհետև վագոններից իջան հենց այն ժամանակ, երբ շնչահեղձ մեռնելու վրա էին: Սակայն մեծամասնությունը, մանավանդ արևմտյան վիլայեթների շարասյուները, այդ հնարավորությունը չունեցան: Նրանք ամբողջ ճանապարհին քայլեցին, ոմանք՝ ավելի ունևորները, սայլեր և ավանակներ ճարեցին: Հոգնության, ցրտի, սովի, թալանի և ջարդերի պատճառով, տեղահանված գրեթե մեկ ու կես միլիոն մարդկանցից կես միլիոնը մահացան առաջին օղակին հասնելուց առաջ: Նրանց վրա ավելանում էին այնտեղ հասնողները, բայց ոչ թե իրենց ոտքերի վրա, այլ՝ Տիգրիսի և Եփրատի ջրերի:

Մեպտեմբերին գիշերներն սկսում էին ցրտել, իսկ ցերեկվա տոթը չէր նվազում: Նրանց քշեցին Մամուրայի կայարանի մոտ մի ընդարձակ տարածք: Աչքը տեսածի չափ, մարդիկ ամեն ինչից՝ ծածկոցներից, հագուստներից, անկողիներից վրանանման բաներ էին սարքել: Մեծ մասը լոկ չորս ձողերի վրա էին հենվում՝ երեք-չորս քառակուսի մետր տարածքի վրա փռելով արևից ու անձրևից պաշտպանող, բայց ցրտի դեմ լիովին անկարող գունաթափ մի գործվածք: Սահակն աչքով այնքան հանպատրաստից վրաններ հաշվեց, որ ծայրերը չէին երևում: Դիտմամբ քաղաքի եզրին էին տեղավորել, երկաթգծի մյուս կողմում, որպեսզի ռելսերի սահմանը լավ հսկվի, ու ոչ ոք չհամարձակվի քաղաք մտնել՝ հաց ձարելու: Իրենք դեռևս մի բան ունեին, վրանի սովերի տակ շտապ և զգուշությամբ կերան, որպեսզի շուրջինները չտեսնեն:

Մերթ ընդ մերթ առանձին խմբեր մոտենում էին երկաթգծին, բայց հետ՝ դեպի ճամբար էին վռնդվում: Սակայն, ի վերջո, զինվորներն այլևս նրանց չսպառնացին, թողնելով, որ իրենց գործն անեն: Քանի որ այս անգամ մարդիկ վրանից վրան էին անցնում ներսիներին օգնելու, որպեսզի մեռյալների դուրս տանեն: Եվ,

որպեսզի մեռյալները մենակ չմնան, իրար կողք էին դնում, հետո, երբ չափազանց շատացան՝ մեկը մյուսի վրա, կարծես մահը բլրակներ սարքած լիներ, որոնք դիտաշտարակների նման շրջապատում էին ճամբարը: Անասունները սովից ու մահվան հոտից փոնչում էին, մանավանդ սայլերին լծված կամ խուրջիների հակեր բարձած ավանակները, որոնք ավելի դիմացկուն էին, մինչդեռ ձիերը սատկել էին ծարավից կամ լեռնային արահետների վրա կոճերը կոտրելով: Շները մնում էին մի կողմ, մարդկանց աչքերում նույն սովն ու հալածանքն էին զգում, և ագռավների երամների հետ համբերատար սպասում մութն ընկնելուն:

Քնում էին միմյանց սեղմված, որպեսզի տաքանան: Օրվա ընթացքում հանում էին հագուստները և գլխավերևում կապելով՝ փռում: Պայմանավորվեցին կոնիացի երկու երիտասարդ նորասակների հետ, որ նրանց սայլից օգտվեն, իսկ տղամարդիկ ավանակին օգնելու համար հերթով հետևից հրեն: Մի կին նրանց առաջարկեց ծածկոցներ կարել, որպեսզի ավելի լավ դիմանան քամու հարվածներին: Իր նշանածի հետ էր, ամուսնանալու էին, բայց հարսանքավորները մահացել էին ճանապարհին:

Սահակի մայրը երկու աման ուներ, որոնց մեջ անձրևաջուր էր հավաքում: Երբ ջուրը վերջանալու վրա էր, շուրթերը թրջում էին լաթերով, որոնք գիշերվա ընթացքում փռում էին, որպեսզի եղյամը խոնավացնի:

Երբ վրանախումբը շատ էր տարածվում՝ սպառնալով երկաթուղին ծածկել, իսկ դիակների թիվն այնքան էր աճում, որ օղբ մահվան հոտից ծանրանում էր, ձիավոր զինվորները հարձակվում էին վրանների վրա ու հազարավոր մարդկանց վերստին քայլելու քշում: Վրանները տապալվում էին ձիերի սմբակների տակ, մարդիկ մտրակներով դեպի եզրն էին քշվում: Երբ չէին կարողանում արագորեն իրերը կապոցներում խցկել կամ վրանները հավաքել, ձիավորներն շտապեցնում էին՝ չորացած գործվածքներից սարքած ծածկերը հրդեհելով:

Հոկտեմբերի վերջին եկավ իրենց հերթը: Մինչև հաջորդ հանգրվանը քայլելու էին այնքան, որքան ուժը տեղը մարդը կարող էր քայլել հինգ ժամում, բայց նրանք երկու օր հետո տեղ հասան:

ԻՍԼԱՀԻՅԵ: ԵՐԿՐՈՐԴ ՕՂԱԿԸ: Ճանապարհն անցնում էր Ամանուսի լեռների կատարներով, հետո իջնում էր դեպի Իսլահիյե՝ գետի ափը: Երկրորդ օղակին հասնելիս առաջին ձյունը եկավ: Շատերը մաշված ցնցոտիներ էին հագած ու միայն քրտնախառն փոշին էր հաստացնում հագուստները՝ նրանց փոքրինչ տաքացնելով: Ծածկոցն ավանակի վրա թողեցին և ամբողջ ճանապարհին ծածկվեցին անկողիներով: Մայրը լքեցին, քանի որ նեղ արահետներով չէր կարող անցնել, և տղամարդիկ իրերից ինչ կարողացան, շալակեցին: Երբ մի քիչ տաքացավ, մի սավան պատռեցին և իրար կապվեցին՝ գառիթափ ձորերի մեջ չընկնելու համար: Լեռնային մաքուր ճանապարհ էր ու շարասյունն անցնելուց հետո էլ այդպես էր մնում, որովհետև ուժասպառ ընկնողներին մահակների հարվածներով ձորն էին նետում: Տատիկին ավանակի վրա փոխադրեցին, ինչը նրան օգնեց դիմանալու, ի տարբերություն շատ ուրիշների, ովքեր ուժասպառ մեռան կամ մահամերձ՝ ժայռերին զարնվելով ցած ընկան: Երբ դաշտ իջան, շարասյանը դիմավորեց մի քանի տասնյակ զինված քրդերից բաղկացած խումբը: Զինվորները նշան տալու նման տեղում դուփեցին՝ առաջ գնացող շարասյունը թողնելով անպաշտպան: Մարդիկ կանգ առան՝ վախեցած նայելով իրենց վրա հարձակվող, հրացանները և սրերը թափահարող ձիա-

վորներին: Մարահարթը նեղ էր, հետևում լեռներն էին, երկու կողմերում՝ գառիթափ հովիտները, իսկ առջևում՝ ձիավորները: Հարյուրավոր պատմություններից ենք իմացել այս դրվագը: Լքված, անպաշտպան շարայուներ, մեծ մասամբ կանայք ու երեխաներ, ցրվում են դաշտում՝ ամեն մեկը փախուստի միջոց փնտրելով, առանց իմանալու, որ հենց որևէ մեկը հաջողացնում է ամբոխից անջատվել՝ հաստատ գոհ է դառնում կողոպտող ու ջարդարար ձիավորներին՝ լինեն նրանք թուրքական բանտերից դիտմամբ ազատ արձակված ու զինված ռճրագործներ, քրդեր, չեչեններ կամ բեդուիններ: Հազվադեպ էր պատահում, որ անսպասելիորեն վրա հասնեին, հաճախ նրանց տեղեկացնում էին շարայուների գալու ժամանակը և երթուղին, իսկ զինվորներին հրահանգված էր հեռանալ՝ թողնելով, որ նրանք իրենց գործը կատարեն: Երբեմն միայն կողոպտում էին ու երիտասարդ կանանց վերցնում, հաճախ էլ մինչև վերջին մարդը կոտորում: Որոշակի կանոն չկար, կարող էին քեզ սպանել, որովհետև դրամ կամ գոհարեղեն ունեիր կամ որովհետև ոչինչ չունեիր նրանց տալու: Լավագույն միջոցը կծկվելը կամ մեռած ձևացնելով՝ գետնին փովելն էր: Եթե բախտ ունենայիր, որ ձիերի ամբակները քեզ չտրորեին, կարող էիր փրկվել՝ մինչև որ շարժուն թիրախների հետևից անընդհատ վազող ձիավորները հոգնեին կամ մթներ և այն ժամանակ հեռանում էին՝ ճչալով ու ձիերի թամբերի վրա կապված թայրտացող կանանց տանելով: Նրանց հետևում մնում էր դիակներով ծածկված դաշտը, որտեղ դեռ կենդանի մնացած մարդիկ դանդաղ ու շշմած ոտքի էին կանգնում:

Այն կնոջ նշանածը, որի հետ ընկերություն էին արել, նույնպես սպանվեց: Վզից անարժեք, բայց փայլուն մի շղթա ուներ կախված, որ մի ձիավոր ուզեց և ձեռք գցելու այլ եղանակ չգտավ, քան գլուխը կտրելը: Մտիպված եղան նրան այնտեղ թողնել՝ վայրի գազաններին ավար:

Թողնելով վիրավորներին իրենց հետևում, առավոտվա կողմ հագիվ հասան Իսլահիյեի դաշտը: Ճամբարի մուտքի երկու կողմերում դիակների կույտեր կային՝ ավելի հաճախ երեխաների: Վրանները փռեցին: Ուտելիքը վերջանալու վրա էր: Առավոտյան ձիավոր զինվորներն անցնում էին դաշտով ու պատահական ուղղությամբ վրանների կողմը հաց էին նետում: Մարդիկ հարձակվում էին մի քանի հոգով մի կտորի վրա՝ դրա համար իրար հետ կռվելով: Ցերեկվա կողմ ճամբարը հանգստանում էր, մարդիկ վրանների տակ էին սողոսկում՝ մահամերձներին հսկելու:

Զինվորները մի կողմ էին քաշվում, որովհետև մահվան ճնշող հոտը քաղցրավուն չէր, այլ սուր և ծանուցում էր արնալուծի տարածումը: Ճամբարի հրամանատարը դեռևս ուժ ունեցող սղամարդկանց կանչեց ու հրամայեց մեռյալներին հավաքել: Քանի որ սովը և արնալուծն աշնանային այդ ամիսներին Իսլահիյեի ճամբարում ավելի քան վաթսուն հազար գոհ խլեցին, հրամանատարը հրահանգեց, որ նախքան թաղելը՝ մեռյալները երկուերեք օր ճամբարի եզրին մնան: Այդպիսով հողմածուփ լինելով՝ մեռյալները չորանում էին, սմբում ու քիչ տեղ էին գրավում, և խմբական գերեզմաններն ավելի տարողունակ էին դառնում:

Հետո վրանները մոտեցրին, որպեսզի կողոպտիչները, հատկապես շրջակա գյուղերի բեդուինները, սողոսկելու տեղ չունենան: Իրենք իրարից չէին վախենում, որովհետև աքսորյալներից ոչ մեկը դրամ կամ ոսկի չէր գողանում՝ չիմանալով ինչ անել դրանք: Իսկ ինչ որ ցանկանում էին ձեռք գցել՝ այլուր, շաքար կամ չոր միս, վաղուց էր վերջացել: Պարիսպների տակ կամ հողաթմբերի մոտ

անասունները խոտի փնջեր էին որոնում: Արնալուծից տառապողները կծկված՝ մահվան էին սպասում: Մյուսները երկար ծամում էին ընթացքից ձիավորների նետած փշրվող հացի պատառները: Հրաշք և միննույն ժամանակ ահավոր մի բան կատարվեց. ձյուն եկավ: Վրաններից դուրս նետվեցին պարզած ափերով. դեռևս բավական կյանք կար մեջները, որպեսզի փաթիլները հալեին ափերի մեջ ու մատների վրայի կաթիլները լիզեին: Հետո, երբ տեսան, որ ձյունը սաստկանում է, սպասեցին մինչև գետնին նստեց ու շների և ավանակների հետ միասին գետնից լիզեցին: Մահակը, ավելի քան մյուսները, բավարարվեց, որովհետև նկատել էր, որ ձյունը նստում ու մնում էր հատկապես մեռյալների ճակատների վրա, որոնք անգամ գետնից ավելի սառն էին:

Բայց ձյան հետ միաժամանակ սարսափելի սառնամանիք վրա հասավ, որը հողը սառեցրեց, ծածկոցներից սարքված վրանները սուրսուր ծալքերի վերածեց, օղը մաքրեց, բոլոր տեսակի էակների վիստալը կասեցրեց ու հոտերը եղյամի պես գետնին նստեցին: Մարդիկ մեկը մյուսին սեղմվեցին՝ մի քանի վրաններից ամենատարողունակ վրանում հավաքվելով, իսկ երբ մեկը մի քանի սառած ջախ թշտացնելով հաջողացնում էր կրակ վառել, բոլորը վրա էին գալիս, նույնիսկ եթե միայն հեռվից կարողանային նայել մարող բոցին: Մահամերձները սովից այնքան էին նիհարել ու ցրտահարվել, որ երբ նրանց ոտքերից կամ ձեռքերից բռնած՝ վրանների միջև քարշ էին տալիս, բազուկները կամ սրունքները կոտրվում էին՝ չոր ճյուղերի նման խշրտալով:

Երբ ձյունը հալվեց, վերսկսվեց շարասյուների կազմավորումը: Երկիսքը մեղմացավ, և անձրև սկսվեց: Ճանապարհները ցեխտովեցվին: Ոտքերին սավաններից կտրած փաթաթաններ կապեցին, այլապես բոբիկ ներբանները հողին էին կպչելու և մարդիկ ուժ չունեին դրանք ցեխից դուրս հանելու: Մանր անձրևի տակ, որ մշուշով էր պատում բոլոր ուրվագծերը, նոր ճանապարհը գրեթե մի շաբաթ տևեց: Անհնար էր մեռյալներին հաշվել, որովհետև այդ մշուշոտ ճանապարհի վրա, որտեղ միայն սեփական շնչառության կապտավուն գույրը էր երևում, ընկնողների անձրևից փափկած միսը նույնքան կակուղ ու կպչուն էր, որքան կավահողը: Հետևից եկողները տրորում էին ընկածների ոտքերը և նրանց միսը սև խմորի նման հունցվում էր ու ծածկվում ճամփաների ցեխով: Իսկ անձրևը չդադարեց, նույնիսկ երբ տեղ հասան:

ԲԱԲ: ԵՐԲՈՐԴ ՕՂԱԿԸ: Սև վրանների դաշտը տարածվում էր բնակավայրից մի քանի կիլոմետր հեռու գտնվող հողաշերտի վրա, խուսափելու համար, որ տեղահանվածները քաղաք մտնեն: Կավահողի պատճառով ձյունախառը ջուրն սկսել էր լճանալ՝ ամեն ինչ ցեխաջրի վերածելով:

Ճանապարհին մնացած մեռյալներին հաշվելու ժամանակ չունեին, որովհետև այժմ շատ-շատերը ճամբարում էին մահանում: Մնացած տղամարդիկ երկու խմբի բաժանվեցին: Ոմանք մեռյալներին էին ճամբարից դուրս հանում ու խմբական գերեզմաններ փորում: Երրորդ օղակում մեռյալներին քարշ տալն ավելի դժվար էր, որովհետև սրանք փխրուն հողի պես չոր լինելով ու ցրտից թեթևացած ոսկորներով, ջուր էին ծծում և ուռչում, իսկ ջրից կակղած երակները կտրվում էին՝ հում մսի նման կարմրելով: Ուռած ու դժվար ծավող, դրանք ավելի շատ տեղ էին գրավում, և փոսերը, բացի այն, որ հողը կպչուն էր, հարկ էր ավելի լայն փորել:

Տղամարդկանց երկրորդ խումբը թափառում էր դաշտերում՝ քաղաքին մոտենալով միայն մինչև աղբափոսերը և աղբատ թաղամասերի ծայրերը՝ սնունդ փնտրելու, ինչը հաճախ սատ-

կած կենդանիներից էր բաղկացած լինում: Ումանք, դեռևս արագաշարժ, ագռավների վրա քարեր էին նետում կամ որսում այն շներին, որոնք շրջում էին ճամբարում և, գիշերն իջնելիս, հապշտապ ծածկված գերեզմաններն էին փորփրում՝ չփտած միս փնտրելով:

Այդպես բռնկվեց տիֆի համաճարակը: Այն նախ երեխաներին հարվածեց: Նրանց այտերը ծածկեց կարմիր բծերով, որոնք ադտոտության պատճառով արագորեն արյունոտ վերքերի վերածվեցին, որտեղ արյունը և քրտինքը խառնվում էին իրար: Ապա անցավ նրանց մայրերին, որոնք չէին կարողանում տիրապետել իրենց և գրկում սեղմում էին ցրտից դողացող մանուկներին: Միայն ձմեռվա սառնամանիքը խափանեց, որ համաճարակը բոլորին համակեր: Բայց դարձյալ ցրտի պատճառով հիվանդներն այլևս որևէ փրկություն չունեին: Հիվանդությունից վախենալով՝ զինվորները հեռու էին մնում ու միայն երբեմն, առանց ձիերից իջնելու, վրանների միջով անցնում՝ շտապ հաց նետելու համար: Ոչ ոք չէր մտածում հացը ցեխից մաքրելու մասին, մի կտոր հաց փախցրած բախտավորները վազում էին իրենց վրանի մարդկանց հետ կիսելու կամ պատառը պինդ բռնելով՝ գլուխը կծկում կրծքի վրա և առանց ծամելու կուլ տալիս, որ չլինի թե հանկարծ ինչ-որ մեկը հարձակվի ու խլի:

Մերթ ընդ մերթ, մանավանդ մահամերձ երեխաների համար խղճմտանքից խելագարվող կանայք, համարձակվում էին ընդհուպ մինչև բնակավայրերին մոտենալ՝ ուտելիք հայցելու կամ ավելի ապահով մի տանիք ու մաքուր անկողին փնտրելու: Նրանց վրնդում էին քարերով կամ մահակի հարվածներով, եթե պարզապես չէին գնդակահարում:

Նրանց ընկերակցող կինը հիվանդացավ: Նստում էր կուչ եկած ու ոչ մի բան չէին կարող անել, բացի իրենց ունեցած բոլոր ծածկոցները նրա ուսերին գցելը: Մի օր Շեյթանյան ընտանիքի տղամարդը վերադարձավ մի սպանված ագռավով, որին որսացել էր այն ժամանակ, երբ թռչունն իր երամի հետ դիակների կույտերի վրա էր շրջում: Տղամարդու հայացքում վայրենի մի փայլ կար, նրա փոս ընկած այտերը գանգուր մազափնջերով էին ծածկված, հագուստները քրքրված էին ու, որպեսզի քամին չթոցնի, կապել էր պարանով՝ կրծքից մինչև գոտկատեղ մարմնի շուրջը մի քանի անգամ փաթաթելով: Կռիվների փոխարեն շորի հանգուցված երկու կտորներ էին, իսկ ոտքի ներբանից մի տախտակ էր կապել, ինչը որ նրա քայլվածքը հողախախտի նման քստքստացող էր դարձնում, և շեմերն անցնելու համար նա ստիպված էր ներբանները բարձրացնել: Որսալու համար վազելու կարիք չկար. արդեն ուժ չունեի, լեշերը պարզապես պետք էր քարշ տալ, իսկ շների և ագռավների համար, որոնք գիրացել էին ճամբարի տրամադրած առատ կերակրից, բավական էր քարը ճարպկությամբ նետել ու հետո՝ նույն քարով գլուխը ջարդել: Կամ վիզն արագորեն ոլորել: Ինչը որ Ռուբեն Շեյթանյանն արել էր, և թռչունի գլուխն անբնական մի դիրքով էր շրջված: Այդպես տեսնելով նրան՝ Հերմինեն երեխաներին կրծքին սեղմեց ու հուզված շնջաց. «Ո՛ւր ես, Աստված»: «Աստված մահամերձ է, կին, – ասաց տղամարդը: – Ահա, իր հրեշտակներն արդեն մեռան»: Ու սև թռչունը վրանի մեջտեղը նետեց: Խոնավ ջախերից դժվարությամբ կարողացան հեղձուցիչ կրակ վառել ու փետրահան արված թռչնի միսը խորովել: Բայց սա օգուտ չտվեց հիվանդ կնոջը, որի կծկված ստամոքսն այլևս կերակուր չէր ընդունում: Կուլ տալ կարողացած միակ կտորը փսխեց ու չկարողանալով ջղաձգությունը կասեցնել՝ քիչ հետո շնչահեղձ եղած՝ մե-

ռավ: «Սև հրեշտակին նշանն է»,– մրմնջաց Հերմինեն: «Ուրիշ՝ ավելի անիծված նշան է,– ասաց Ռուբենը,– եթե Աստված սև հրեշտակներն անգամ կսպաննէ»: Եվ նայեց դեպի կապարագույն երկինքը, դեպի ցեխոտ հողը, դեպի մանր անձրևն ու դեպի ճամբարի գոլորշին, որ ագահ ու սպանիչ մառախուղի մեջ էր ներառնում երկինքն ու երկիրը: Կնոջն ավանակի վրա դրեցին՝ խուրջինի նման երկու կողմից կախված, և Ռուբենը նրան տարավ դեպի դաշտի եզրը, որտեղ մարմիններն ուռչում ու դոնդոլի պես ընդարձակվում էին: Նախքան այդ, սակայն, հանվեցրին ու շորերը բաժանեցին Սահակի փոքր քրոջ, որ ցրտից պաշտպանվի, և կոնիացի երիտասարդ կնոջ միջև, որպեսզի բեղուիները նրան մերկ չտեսնեն ու ձեռք գցելու ցանկություն չունենան:

Տեղացիները որքան էլ զգուշացան՝ թափառող գաղթականներին շների պես վոնդելով իրենց ձեռքն ընկած ամեն բանով ու գոչելով «Էրմենի՛, էրմենի՛», որպեսզի ուրիշներն էլ դուրս ելնեն ու քարեր նետեն վարանքով ու բազուկները բաց մոտեցող էակների վրա, ուրեմն որքան էլ զգուշացան, տիֆը քաղաքում ևս տարածվեց: Այն ժամանակ արաբներն իրենց ռազմիկներին հավաքեցին ու գաղթականների ճամբարի վրա հարձակվեցին՝ ձիերի սմբակների տակ տրորելով, սրի սայրով կամ փամփուշտով սպանելով, սրի շեղբով կամ մահակի հարվածներով վտարելով ու վրանները հրդեհելով: Ինչպես ամեն անգամ, զինվորներն անտարբեր նայեցին՝ բարյացակամությամբ ընդունելով օգնությունը, որ, այլ առիթների նման, ավագակախմբերը սովի, արնալուծի ու տիֆի ժամանակ տրամադրեցին: Ջարդը տևեց ամբողջ օրը, իսկ ռազմիկները խոստացան վերադառնալ, եթե հաջորդ օրն աքսորյալները չհեռանան՝ ուր որ աչքները կտրեր, միայն թե՛ իրենց տներից որքան կարելի էր, հեռու:

Թեև հրահանգներն ասում էին, որ Բաբի ճամբարը մինչև գարուն պետք էր մեկուսացած պահել, սակայն տեղացիների դժգոհության պատճառով շարասյուները նորից ճամփա ընկան: Հունվարի 5-ն էր, փաստորեն թվականը ճշգրտությամբ չգիտեին, քանի որ ոչ ոք օրերի հաշիվը չէր պահել, և օրերը մեկը մյուսից տարբերող ոչ մի նշան չկար, ինչպես օրինակ՝ կիրակի օրվա պատարագը, միայն եղանակների անցումն էր ընկալվում, այն էլ՝ մոտավոր գնահատմամբ: Միակ քիչ թե շատ ճշգրիտ հաշիվը մեռյալներինն էր, որ թուրք զինվորները պահում էին սվինով խազեր անելով դիակները լցնելու յուրաքանչյուր տեղին ամենամոտ սյան վրա: Բայց այս հաշիվը ևս կորավ, երբ տիֆի ավերածությունների ժամանակ սկսեցին մեռյալներին սայլերով բերել և ուղիղ փոսի մեջ նետել:

Ծննդյան գալուստը փորձեցին գիշերների երկարության համեմատ հաշվել, բայց, որովհետև երկինքը միշտ ամպամած և կապարագույն էր, գիշերները իրականից ավելի երկար էին թվում: Եվ մեռյալները շատացան, որովհետև մահամերձները հոգին ավանդում էին հատկապես գիշերը: Բայց քանի որ հաջորդ օրն առաջին շարասյուները ճամփա էին ընկնելու և անհնար էր իմանալ, թե քանի հոգի էին հասնելու ճանապարհի վերջը, այն մի քանի քահանաները, ովքեր մյուսներից միայն իրենց ավելի երկար մոռուքներով էին տարբերվում, որոշեցին, որ այդ գիշերը ճրագալույծը լինի:

Նրանք, ովքեր դեռ մի կտոր մոմ ունեին, վառեցին այն: Հերմինեն ասաց. «Ձգեցե՛ք լույսը տեսնվի»: Ամբողջ մոմը վառեցին, տաք մեղրամոմը մատներով լիզելով և ափերի վրա տարածելով: Հարկավոր էր մի կտոր էլ պահել Հարության գիշերվա համար: «Մինչև այն ատեն,– ասաց Ռուբենը՝ ներբանները ծածկելով,– բոլորս մեռած պիտի ըլլանք»:

ՄԵՍՔԵՆԵ: ՉՈՐՐՈՐԴ ՕՂԱԿԸ: Հալեպին չնոտենալու համար, որտեղ նորից վարակի վտանգը կար, տեղական բնակչության աճող թշնամանքից զգուշանալով ու Ջեմալ փաշայի հատուկ հրամանով, որ տեղահանվածներն ու նրանց շարասյուները երկաթուղուց որքան կարելի է հեռու պահվեն, շարասյունը Հալեպի և Սեբիլի միջով անցնող ավելի մատչելի ճանապարհը շրջանցեց և վայրի տեղերով՝ Թեֆրիջեով ու Լալեով անցավ: Ուժը տեղը մարդը Բաբից Մեսքենե ճամփան կարող էր երկու օրում անցնել, եթե հաշվի առնենք, որ Լալեի քարվանսարաններում կենարար քնի հաճույքը կվայելեր, կուշտկուշտ կճաշեր և ավանակներին բարձած ջրով լիքը տկեր կունենար: Բաբից մեկնած շարասյուների նույն ճամփորդությունն առնվազն տասն օր տևեց, երբեմն նույնիսկ երկու շաբաթ՝ նշված տեղը հասնելու համար:

Բաբից մեկնելիս վերստին սկսեց ձյուն գալ: Քանի որ դեպի Հալեպ մեծ ճանապարհով չէին առաջանում, իսկ ձյունը ծածկել էր ամբողջ տարածությունը, շարասյուները հաճախ ուղղությունը կորցնում էին և զինվորները մի քիչ զցել-բռնելուց հետո ձիերի ղնչերով նրանց մի կողմից հրելով՝ վերադարձնում էին ուղիղ ճանապարհի վրա: Մխավելը դժվար չէր, որովհետև շարասյուներում գտնվողները, նույնիսկ առաջին շարքերի ամենադիմացկունները, հողմին ընդդիմանալով՝ քայլում էին հայացքները դեպի ներքև, գլուխները հազվադեպ բարձրացնելով, բայց ոչ դեպի ճանապարհը, որն անվերջ էին համարում, այլ դեպի երկինք՝ փնտրելով լույսի մի նշույլ, մի նշան, որ ցույց տար, թե ձյունը դադարում է կամ պարզապես որևէ այլ նշան: Հողմից պաշտպանվելու համար փաթաթվել էին ունեցած բոլոր լաթերով ու ծածկոցներով՝ դրանք պարաններով կապելով մարմնին: Ամենահաստ ծածկոցները ոտքերի համար էին պահել՝ թաղիքե ոտնամանների նման ինչ-որ բան ձևելով, որը թաթախել էին ձեթի մեջ, եթե դեռ մնացել էր, կամ քարյուղի փոսերի մեջ՝ ձյանը դիմանալու համար: Շարասյունը մեկնելիս խիտ էր եղել, բայց հետո, հոգնությունն աճելու հետ, երկարել էր գրեթե մեկ կիլոմետր: Ջինվորները, այլևս չուզեցնալով շտապեցնել, բավարարվում էին նրանց հրմշտելով, իսկ մտրակով կամ մահակով խթանվածները քայլերն արագացնելու փոխարեն ընկնում էին ծնկների վրա: Մա համարելով ըմբոստության նշան՝ սպանում էին, փամփուշտները խնայելու համար, զագաթներին հասցրած մահակի հարվածներով: Նրանք ուշաթափ ընկնում էին ձյան մեջ, ինչը որ նույնն էր, թե մահը: Հետո հրաժարվեցին՝ թողնելով սրանց առաջ գնալ իրենց ուժերի կարողության չափով: Հոգնածները հետզհետե ավելի կամաց էին քայլում ու հասնում շարասյան վերջը, ոտքերը դժվարությամբ էին ձյունակույտերից դուրս քաշում և, ի վերջո, ոտքերի խիստ սառածության պատճառով անկարող լինելով ծնկները ծալել՝ մնում էին ձյան մեջ անշարժ խրված: Այդպես ոտքի վրա էլ մահանում էին, բազուկները տարածած այնպես, ինչպես քամին էր բարձրացրել՝ սև ու չորացած ծառերի պես: Նրանց երբեմն հենց այդպես՝ դեռ կանգնած, հողմածուփ սառած ձեռքերը խշրտալիս էին գտնում այն սայլերը, որ մի քանի օր հետո ուղարկել էր Հալեպի վալին՝ մտահոգ, թե ճանապարհների վրա մոռացված մեծ թվով մեռյալները քաղաքում համաճարակ կտարածեն: Սկզբում գերեզմանափորները վախեցան: Հետո, պարզապես փտած արմատներով ծառերի նման տեղահանեցին՝ ասելով, որ հողն այդքան շատ մեռյալներից կշտացած կլինի և որոշել է սրանց թողնել ոտքի վրա կանգնած մեռնելու:

Քնում էին լքված քարվանսարաններում, երբեմն երկու օր շարունակ այնտեղ մնալով, որպեսզի վրաններն ուժ գա: Հալեպից մե-

ոյալների համար սայլերի հետ միաժամանակ բլդուրի մի քանի պարկ եկավ, որից յուրաքանչյուրին բաժանվեց այնքան, որքան տեղավորվում էր իրար միացրած գույգ ափերի մեջ: Թեֆրիջեում, ապա Լալեում հեռվից նկատեցին մեծ, սյուների վրա դրված թիթեղե տանիքներով, երբեմն կողքին աղյուսե ապաստարաններով բազում վրաններ և ուրախացան, որ ցրտից կպատսպարվեն: Բայց թույլատրվեց դրանց մոտենալ միայն մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա: Որպեսզի դեպի Մեսքենե ճանապարհին մեռյալները չափովեն, իշխանությունները որոշել էին Հալեպի վիլայեթում հիմնել այդպիսի շինություններ, որտեղ կհավաքվեն շարասյունների մահամերձները: Սրանք այլևս ոչ մի խնամք չէին ստանում, միայն տասնհինգքսան հոգի խցկում էին մի վրանում՝ թողնելով, որ մահանան: Նրանց վիճակն այնքան ողբալի էր, որ որևէ կողմ չըջվելու կամ դեմքերը միջատներից պաշտպանելու ուժ անգամ չունեին: Մահանում էին այն դիրքով, ինչպես թողել էին, հաճախ աչքերը բաց, որովհետև փոքրացած ու չոր կոպերն այլևս չէին կարող աչքերի սպիտակուցների վրա փակվել: Ուստի այս ճամբարները պաշտպանում էին միայն մի քանի անգեն պահպաններ, ուլքեր, սակայն, շների, բորենիների և ագռավների դեմ զինված մահակներով ու քարերով՝ առանձնապես ջանք չէին թափում:

Այդ կարգի տեղերին մոտենալու ուրախությունը, որ թվում էր պատրաստվել էին հողմից, անձրևից և ձյան տարերքից պատսպարվելու համար, փոխվեց զարմանքի, ապա ահի, երբ շարասյունը վրանների շրջակայքում կանգնեցվեց՝ առանց մոտենալու թույլտվության: Երկու ապաստարաններից յուրաքանչյուրի առջև շարասյանը դիմավորեց զինվորների մի խումբ՝ չաուշի ու սև հագուստներով ինչ-որ անձնավորության գլխավորությամբ, որին մյուսներն անվանում էին *դոկտոր էֆենդի*: Նա հրամայեց, որ շարասյան բոլոր մարդիկ շարքով կանգնեն մեկը մյուսից մի քայլ հեռավորության վրա, որպեսզի չհենվեն միմյանց: Ոմանք անմիջապես տապալվում էին՝ *դոկտոր էֆենդու* գործը հեշտացնելով: Որովհետև նա եկել էր խնամելու ոչ թե ողջերին, այլ՝ մեռյալներին: Որպեսզի ճանապարհի վրա բազմաթիվ ցրված դիակները չման, մանավանդ որ Հալեպը լեցուն էր հյուսպատոսարաններով՝ պատրաստ եվրոպական կայսերական արքունիքներին հեռագրեր ուղարկելու, դոկտոր էֆենդին մատնանշում էր մահամերձներին, որոնց անմիջապես վրաններն էին տանում ու հարվածում, եթե նրանց մեջ դեռևս մնացած կյանքն ընդդիմանալու փորձ աներ: Դոկտոր էֆենդին յուրաքանչյուրի վիճակը գնահատեց՝ մատը բարձրացնելով նրանց վրա, ուլքեր ցան ունեին, արդեն բոլոր հողերը դողում էին, չափազանց գունաթափ այտերով և փոս ընկած աչքերով էին, կամ բերանի անկյունները կանաչակարմրավուն փրփուրով էր ծածկված, ինչը ծակծկված թոքերի խզոցների հետևանք էր: Մահամերձների այս երկու ճամբարներից յուրաքանչյուրում շարասյունը գրեթե մեկ տասներորդով նվազեց: Բարից մեկնաձների ավելի քան մեկ երրորդն այլևս Մեսքենե չհասավ: Շատերը շունչները փչեցին մահամերձների երկու հանգրվաններում, մյուսների մարմինները ճանապարհների վրա սփռվեցին, մսերը ձյան հետ միասին հավելելով և առուններ դառնալով՝ հոսեցին գնացին, իսկ ոսկորները քարաբեկորների կույտերում մաշվեցին:

Մեսքենեում, չորրորդ օղակի սահմանի վրա, շարասյունները վերստին խաչվում էին Եփրատին, որ դարձել էր հազարավոր գաղթականների համար հոսող գերեզման: Մեսքենեի կողմից գե-

տի ոլորանի վրա հավաքվում էին հյուսիսից եկած դիակները, որոնց դեռևս ջրերը կույ չէին տվել կամ ձկները չէին քրքրել: Մարմինները կեռ ձողերով ափ էին քաշվում: Քանի որ հողը սառած էր, իսկ դիակները թաղելու համար շատշատ էին, քարյուղով ցողվում ու հրի էին մատնվում: Սև ծուխը երևում էր Մեսքենեի ճամբարից, ուստի գաղթականները գիտեին, թե ինչու է ծուխը թանձր, ինչու է խարույկը խոնավ, հետևաբար միայն մլմլալով կարող է այրվել, և ինչ է լողում գետի վրա, այդուհանդերձ մոտեցան ափին, ծնկի եկան և ագահաբար խմեցին մոխրահամ ջուրը: Ոմանք վերստին վրաններ խփեցին, ուրիշները տեղավորվեցին լքված վրաններում: Ինչպես ամեն անգամ նոր մի շարասյան գալուց հետո, մեռյալների թիվն աճեց, այնուհետև վերադարձավ օրական սովորական հինգվեց հարյուրի թվին: Ցուրտը մի քիչ մեղմացել էր, մանավանդ ցերեկը, բայց գիշերը մնացել էր նույնքան կատաղի: Անձրևն ու ձյունը դադարել էին և անապատին մոտենալուն հետ հետզհետե ավելի հազվադեպ էին լինելու: Օդն էլ չոր էր դառնում, ուստի մահամերձների շնչառության խզզոցն էլ ավելի սուր էր:

Ճամբարը խստորեն հսկվում էր: Այն քչերին, որոնց հաջողվել էր հսկողությունից դուրս գալ, դեպի քաղաք տանող դաշտում բռնում էին, մի քանի ժամով մինչև վիզը սուզում էին գետի պաղ ջրերում, ապա հողմածուփ թողնում ափին: Եթե վերապրում էին, նրանց ուղարկում էին վրաններ, որտեղ սրթսրթալով ու զառանցելով՝ քիչ անց մեռնում էին:

Ավանակը հանկարծ ծնկի իջավ ու ջուրը մերժեց: Լավ կենդանի էր: Ռուբենը քնքշությամբ երկար շոյեց նրա ճակատը, հետո քարով մի քանի անգամ խփեց այն տեղին, որը շոյել էր: Երեխաները ողբացին, բայց արցունքները սրբեցին, երբ մսի քաղցր համն զգացին, քանի որ այն որսի ագռավների մսի պես ջլոտ չէր, ոչ էլ դիակներինի պես դառ: Մի քանի օր գոհացան ու կազդուրվեցին: Ստացան ևս մեկական բուռ բլդուր: Երբ ողորմության այս վերաբերմունքի առջև հարցական հայացքները բարձրացրին, պատճառը Քյոռ Հուսեինից իմացան, նույնից, որը փախստականներին պատժում էր սառած ջրի մեջ սուզելով. «Չեմ ուզում, որ այստեղ մեռնեք: Արդեն բավական գլխացավանք ունենք: Հողը կպչուն է, դժվարությամբ է փորվում: Մեկ է՝ մեռնելու եք: Բայց ձեր ոտքերով մինչև անապատ գնացեք: Այնտեղ ոչ ոք չի զբաղվելու ձեզով: Հողմերն ու ավազները կթաղեն ձեզ»:

Այն ժամանակ հասկացան, որ ովքեր ափի մեջ մի գավաթ հատիկ էին ստանում, ճանապարհը շարունակելու էին: Նրանց թույլ տվեցին գետին մոտենալ ու մոխրաջրից խմել, որ Հորդանանի ջրի պես մարդկային մսի համ էր ստանալու: Բլդուրը ժամանակավոր դարման էր արնալուծից դատարկված աղիների համար: Իսկ ջուրը փորի մեջ ուռեցնում էր անձամ կույ տված հատիկներն ու նրանց մեջ տանջալի սովի ու միևնույն ժամանակ կուշտ լինելու զգացողություն առաջացնում: Քանզի մարմինն ավելի շատ ուժ էր պահանջում, մինչդեռ չուտելու պատճառով կծկված ստամոքսն ուռչում էր՝ սպառնալով պայթեցնել դատարկ աղալուց բարակացած պատերը:

Սահակը նիհարել էր, կոճերը բազուկներից միայն մի քիչ ավելի հաստ էին: Նրա մայրը խիստ չափավոր էր բաժանում տոպրակներում մնացած այլուրն ու շաքարը. Կոնիայում էին գնել՝ վաճառականներից, ովքեր իմանալով, թե նրանք ուր էին գնում ու հետևաբար հուսահատության գինն ավելացնելով՝ պահանջել էին եռապատիկը:

Ուտում էին երեկոյան, որպեսզի կարողանան քնել, որովհետև, ինչպես նկատել էր Հերմինեն, գիշերը, երբ մարմինն ինքն իրենով է զբաղված, ավելի դժվար է սովին դիմանալը: Սկզբում, բուրբին հավասար էր բաժանում, իսկ հետո՝ ավելի քիչ չափահասներին և ավելի շատ՝ երեխաներին: Իսկ Մեսքենեում տատիկին բաժին չտվեց, ով մի գիշեր խաչակնքեց, երեսը պատին դարձրեց ու կուչ եկած՝ մեռավ: Այդպես էլ առավոտը մեռյալներով լեցուն սայլի մեջ բարձեցին և այդպես էլ հետո փոսը նետեցին: Քանի որ ոչ ոք մեռյալներին չէր լողացնում, չէր հսկում ու ձեռքերը կրծքի վրա միացած դագաղի մեջ չէր դնում, հարկ չկար տաք ջրով թրջած լաթեր դնել ծնկներին ու դաստակներին՝ ծավված ոտքերն ու բազուկներն ուղղելու համար: Լաթեր չունեին և, նույնիսկ եթե ջանային էլ հողերի սառած ու չորացած կռճիկները հարթեցնել, ապարդյուն կլինեիր, որովհետև խմբական գերեզմաններում մարմինները մեկ առ մեկ չէին դնում, այլ գլորում էին խառնիխուռն: «Ավելի լավ մինչև ցորեկ կպահեինք,– ասաց Հերմինեն:– Մինչև այն ատեն փոսերը կլեցվեին և վրան կդնեին...»: Ռուբենը չպատասխանեց, այլ բավարարվեց ուսերը թոթովելով: Այլևս չէր խոսում, ուսերն էր վեր քաշում ու կինը չզիտեր՝ դա նրա համար խոսելակերպ էր, թե գնալով կորացող մեջքը թմրագերծելու միջոց:

Տատը մահանալու հարմար պահ էր ընտրել: Հաջորդ օրը զինվորները շրջապատեցին ճամբարի անկյունն ու նրանց վերստին ճանապարհ ընկնելու քշեցին: Ավանակի սատկելուց հետո, միննույն է, տատն անկարող էր լինելու քայլել, ու նրան կտանեին Լալե վերադարձող մահամերձներով լեցուն սայլերի կողմը, որտեղ միակ առատ բաները միջատների պարսերն էին ու համբերությունը, որով միմյանց կողքին փռված մահամերձներին թողել էին մահանալու:

ԴԻՊՄԻ: ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՂԱԿԸ: Սովորաբար Մեսքենեից մինչև Դիպսի քայլելու համար ընդամենը հինգ ժամ էր պետք: Սակայն շարասյանն ավելի քան երկու օր պետք եղավ: Առաջին անգամ ոտքերն ավազոտ հողերի հանդիպեցին, որոնք ծանուցում էին անապատին մոտենալը:

Մեռյալներին ու մահամերձներին հավաքող սայլերն այլևս չընկերացան նրանց: Երբեմներբեմն մեռյալներին հավաքող գերեզմանափորներն սպասում էին, որ հողմերն ավազը ցրեն և մերկացած ու սևացած մարմինները ծածկեն: Ճամփորդության երկու օրերը, սակայն, հանդարտ էին: Երկինքը բացվել էր, ու հողմը՝ հանգստացել: Դիակները ճանապարհի եզրին էին մնացել, մեծ մասամբ՝ գազանների կողմից հոշոտված: Նրանց մեջ՝ հոգնությունից, սովից կամ ծարավից ուժասպառ մահամերձ կանայք ու տղամարդիկ և երեխաներ, ովքեր չէին հասկանում, թե ինչ է կատարվում ու քարերի մեջ կամ չորացած ծառաբներին հենված՝ մահվան էին սպասում: Նստած մնալու ջանքը մահվան դեմ պայքարելու վերջին ճիգն էր, որովհետև այլապես ճանապարհի եզրին փռված ավազով կծածկվեին՝ խեղդամահ լինելով:

Մի քանի հազար վրանից բաղկացած ճամբարը տեղադրված էր Եփրատի աջ ափին գտնվող մի հովտում: Այս կերպ տեղադրողները մտածել էին, որ մահվան մնայուն հոտը և արնալուծի ու տիֆի սուր հոտերը բուրների մեջ պարփակվելով՝ դժվարությամբ կտարածվեն: Մեսքենեի և Դիպսիի միջև ճամփան ավելի կարճ էր, քան Բաբի և Մեսքենեի միջև, ուստի Հալեայի վալին միջանկյալ հանգրվաններում այլևս մահամերձների համար ապաստարաններ չէր սարքել, որոնք մեղմասածությամբ, *խաստախանե*, այսինքն՝ հիվանդանոց էր անվանում: Փոխարենը շարասյունների ուժասպառ

վիճակը նկատի առնելով՝ երկու օր ավագոտ ճանապարհով, ապա լեռնային նեղ արահետներով քայլելուց հետո Դիպսիի ամբողջ ճամբարը *խաստախանե* էր կոչվում: Եվ դա իր անվանն արժանի էր, քանի որ մի քանի ամսվա ընթացքում, որքան որ իբրև համակենտրոնացման ճամբար գործեց, այդտեղ ավելի քան երեսուն հազար մարդ մահացավ:

Հիվանդանոց կոչեցյալը բոլորովին գուրկ էր դեղերից, ու հոգածություն էին ցուցաբերում լոկ վերապրող գաղթականների մեջ եղած հայ բժիշկները, ովքեր կարող էին ընդամենը հիվանդության անունն ասել, երբ դա ակնհայտ չէր, և մինչև մահ մնացած օրերը հաշվել: Դիպսիի ճամբարը մահվան հետ հաղորդակցվելու ամենախորը աստիճաններից մեկը եղավ, ոչ այնքան մահացողների մեծ թվի պատճառով, այլ հատկապես էլ ավելի մեծ թվով այն անձանց պատճառով, ովքեր այնտեղ վարակվելով, մեռնելու էին ավելի հեռու՝ Դեյր էզ-Ջորի ճանապարհին, որտեղ մահվան յոթերորդ զգեստը ևս ընկնելու էր:

Այդ ժամանակ մարտ ամիսն էր: Անձրևները դադարել էին:

Մերթ ընդ մերթ, երեկոյան կողմ կամ արևածագին, ամպերի մի վարագույր էր հավաքվում: Գարունն աննկատելիորեն էր գալու գաղթականների համար, ովքեր քիչ էին նայում իրենց շուրջը, այն էլ՝ ձիերի դոփյունից կամ բեդուինների հրացաններից ու ճիչերից վախեցած: Ուստի նրանք նայում էին հատկապես դեպի ներքև: Եվ այսպես գարունը հայտնաբերեցին: Դեպի Աբուհահար, Համամ, Մեբկա և Դեյր էզ-Ջոր, որտեղ ծառերը հետզհետե նոսրանում էին, գարունն անսպասելիորեն գալիս էր, երբ խոտի փնջերն էին ծլում՝ երկար ու բարակ ծիլերով: Սկզբում չգիտեին, թե ինչպես ուտեն, նրանց լնդերը խոտի սուր ծայրերից արնոտվում էին, իսկ ջրոտ ծեղերից՝ խեղդվում: Հետո, ավելի ուշիմներն ու համբերատարները խոտն ուտելու արվեստը մյուսներին ցույց տվեցին: Հարկ էր ծեղերն ափի մեջ հավաքած սեղմել, վրան մի քիչ աղ ցանել, որ խոտի գունդը թրջվի: Միանգամից չէին ծամելու, այլ հարկ էր թքի մեջ փափկացնել այնքան, որքան կարող էին չոր բերանում հավաքել և այսպես մի քանի բույս պահել, մինչև որ սոված բերանում այն մի տեսակ եփուկի նման մածուկի վերածվեր: Երբ անկարելի էր խոտեր գտնել, Ռուբենն արմատներն էր հանում ու Եփրատի ջրի մեջ լվանում: Մանրում էր ու ջրի մեջ թրջում, որ կարելի լինի մի քանի ժամ հետո ուտել:

Չէր անձրևում, բայց երկինքը պայծառ չէր: Անապատի մոտենալու հետ մի տեսակ մշուշ էր առաջանում, որը հողմի քշած փոշու պատճառով օդում կախված էր մնում: Շները և գայլերը պակասել էին, դրանց փոխարեն բորենիներ էին հայտնվել: Դրանց բռնելն ավելի դժվար էր, քանի որ արագաշարժ էին ու անապատի չորությունը վարժ: Իսկ դրանց լեշերը գտնելն անհնար էր, որովհետև երբ զգում էին, որ իրենց վախճանը մոտենում է, անհետանում էին անապատում՝ գնալով այնտեղ, որտեղից եկել էին: Մնում էին ագռավները, իսկ դրանց խփելը դժվար էր, որովհետև սաղափագույն մեզի մեջ անկարելի էր դրանք տարբերել դատարկ օդից, որի միջով թռչուններ չէին անցնում, ոչ էլ կարելի էր դրանց մեջ սպիտակ հրեշտակները սևերից զանազանել:

Քանի որ խոտը պակասում էր ոչ միայն ժահրերի, այլև թուրք զինվորների ձիերի պատճառով, որոնք արածում էին ճամբարի շուրջը, Հերմինեն ու Ռուբենը տանջալի մտածմունքներից հետո որոշեցին Սահակին սուրհանդակների շարքը մտցնել:

Մեծ հայրերս՝ Կարապետ Ոսկանյանն ու Սեդրակ Մելիքյանն իրենց մենակության պահերին աքսորի երգեր չէին երգում: Ոչ էլ

մանկության օրերի մյուս հայ ծերունիները: Երեխա ժամանակ մեր հանդիպումներին կարդացածս բանաստեղծությունները, ունկնդրածս երգերը հիշատակում էին հատկապես լեռներում պայքարած ֆիդայիներին, բայց ոչ ջարդերն ու տեղահանությունները: Շարասյունները լռելյայն իջան մահվան հետ հաղորդակցության աստիճաններով: Գուցե այն պատճառով, որ ներքին տառապանքը շատ ուժեղ էր՝ ինչ-որ բան դուրս հանելու համար: Գուցե, որովհետև չէին հավատում, թե հետո որևէ բան գոյություն ունի:

Բայց դուրս չհանելով՝ աքսորյալներն իրենք իրենց համար էին գրում: Մահվան յոթ օղակների տարածքներից մնացած ձեռագրերը գրվեցին աքսորի ճանապարհին, այն տեղերում, որտեղ մի կտոր փայտ, մի ճանապարհասյուն, կակուղ կեղևով մի ծառ, մի պատ էին գտնում: Երկար ժամանակ, մինչև որ անձրևները լվացին ու հողմերը սրբեցին, փայտի ու քարի վրա գրված կամ փորագրված հայերեն խոսքեր ու գրեր մնացին: Անցնողները հետևից եկողներին լուր էին թողնում: Իսկ սրանք, եթե դեռ տեղ էր լինում, իրենց սեփական խոսքերն էին ավելացնում: Բռնագաղթի ճամբարներում շրջում էին թղթի պատառիկներ, որոնք մարդիկ մեկը մյուսին էին փոխանցում: Ճնշումների վախից ստորագրված չէին, ոչ էլ՝ թվագրված: Հարկ չկար: Բացառությամբ ցեխաջրի վերածվող ձյան և ցրիվ եկող փոշու վերածվող ցեխի, իրականությունն անփոփոխ էր:

Լուրերը մահվան յուրաքանչյուր օղակի իրողություններն էին նկարագրում: Լուրեր տանողները սուրհանդակներն էին: Ընտրվում էին տղաներից, ովքեր արագաշարժ էին ու աննկատ սողոսկելու ունակ: Իսկ ճանապարհներն արագությամբ կտրելու ուժ ունենալու համար նրանց ճամփաշար էին տալիս: Ոմանք այլևս չէին վերադառնում կամ ներառվում էին առաջատար շարասյուններում՝ այդպիսով դեպի մահ իրենց ճամփան կրճատելով կամ էլ ճանապարհին սպանվում էին: Ուստի սուրհանդակները միշտ կամավորներ էին լինում ու որբերից ընտրված, որովհետև քիչ ծնողներ էին համաձայնում այդ կերպ իրենց երեխաներից բաժանվելուն: Շարասյունների այս ծայրում որոշողի անունը Գրիգոր Անգույթ էր: Պատասխանատուն մյուս ծայրում՝ Դեյր էգ-Ջորում, Լևոն Շաշյանն էր, մինչև որ աներևակայելի խոշտանգումներից հետո սպանվեց: Գրիգոր Անգույթը տղային հայացքով չափեց, հրեց, ափով հարվածեց կրծքին, բայց Սահակը ոտքի վրա մնալու ուժ գտավ ու չընկավ: Մարդը որոշեց, որ տղան հարմար է: Մինչև Դեյր էգ-Ջոր ճանապարհը քայլելով վեց օր էր տևում, բայց սուրհանդակները հատկապես գիշերն էին քայլում, իսկ ցերեկը թաքնվում գետափերի փոստրակներում, ուստի գնալ-գալն ավելի քան երկու շաբաթ էր տևելու: Սահակն իմացավ այն անձնավորության անունը, որ Ռաքքայի գաղթականների ճամբարում իր ճամփի պաշարն էր ապահովելու մինչև Դեյր էգ-Ջոր: Ռուբենն ու Հերմինեն մի կողմ քաշված՝ դիտում էին, առանց անդրադառնալու, թե այն, ինչի որ համաձայնել էին, իրենց որդու փրկության օգտին էր, թե՛ կործանման: Մի մարդ վրանից դուրս պահապան էր կանգնել, մի ուրիշն ամանով ջուր էր բերել: Հերմինեն խնամքով լվաց Սահակի մեջքը, հետո տղան երեսնիվայր ու բազուկները տարածած՝ պառկեց: Գրիգոր Անգույթը գրիչը թանաքամանում թաթախեց ու տղայի մաշկի վրա դանդաղ գրեց՝ ամբողջ մեջքը մինչև գավակոսկրը ծածկելով մեծ, հնարավորին չափ զուսպ տառաձևերով, որպեսզի նշանները պարզեցնի ու շուտով վերջացնի, նաև որքան կարելի էր քիչ քերծելու համար տղային, ով գրչի առաջացրած խազերի ցավը տանում էր անտրտունջ: Ոսկորի վրա մաշկի ձգված լինելը գործը հեշ-

տացրեց: Տղան մի պահ անշարժ մնաց, որպեսզի ներկը չորանա: Հետո ամանի ջրին հող խառնեցին ու ջրալի տիղմ շաղեցին, որով ուսերը ծածկեցին: Այդպես ցեխապատ՝ միայն մի քիչ ավելի կեղտոտ էր, քան առաջ: Տղային հարցրին, թե լողալ կարո՞ղ է, իսկ նա պատասխանեց, որ Բոսֆորի ափին է մեծացել: Հետո Գրիգորը հողի վրա մատով դեպի Դեյր էզ-Ջոր ճամփան ցույց տվեց: «Գիշերները կքալես: Եփրատի ափին կհետևես, չես հեռանար: Եթե տեսնաս, որ փախուստ չունիս, ջուրը կնետվիս և որչափ կրնաս հոն կդիմանաս, մինչև որ ներկը կկակուղնա և ջուրը կլվա: Անոնք պետք չէ գիտնան ինչ գրված է հոն: Նույն բանը՝ երբ վերադառնաս: Մանավանդ երբ վերադառնաս»:

Հերմիներն տղայի ճամփի պաշարը վերցրեց: Ցորենի և բրնձի մեկական բուռ փոքր աղջկա համար պահեց, հետո ողջագուրվեցին ու տղան գիշերվա մեջ անհետացավ: Հրաժեշտ չտվեցին: Իրենց շուրջն այդքան մահ տեսնելով և անշրջանցելի իրականության պես ընդունելով՝ վաղուց մեկը մյուսին հրաժեշտ էին տվել: Սահակը լիովին կատարեց պահանջված բաները: Մնունդը խնայեց, երեք օր համբերեց, բայց Ռաքքայում կանգ չառավ՝ վախենալով, որ չի կարող այնտեղից դուրս ելնել: Երբ Դեյր էզ-Ջոր հասավ, Լևոն Շաշյանին փնտրեց: Սա ցեխը սրբեց ու Գրիգոր Անգութի պատգամը կարդաց, նորից մաքրեց՝ ուրիշ տառեր գրելու համար, հետո մեջքի վրա մոխրախառը տիղմ քսեց: Վերադարձին Գրիգոր Անգութը նախ մի շերեփ ջուր ու մի բուռ բլդուր տվեց: Կանանց հրահանգեց տղային մաքրել, և երբ կարդաց, խնդրեց իրենց մենակ թողնել: Իր ձեռքով սրբեց տղայի ուսերի վրայի գրությունը, ողջագուրվեց նրա հետ և ասաց. «Ոչ մեկուն չըսես ինչ տեսար Դեյր էզ-Ջոր: Շատեր չպիտի հավատան, իսկ քեզի օգուտ չըներ: Եվ անոնց, որոնք պիտի հավատան, օգտակար չպիտի ըլլա: Ծնողներուդ քով գնա»: Երբ Հերմիներն նրան տեսավ, գրկեց ու արտասովեց՝ ոչ այնքան վերստին իրենց կողքին զգալու ուրախությունից, որքան՝ խղճահարությունից:

Ապրիլի կեսին Դիպսիի ճամբարը կազմալուծվեց, ու վերջին շարասյունները գնացին Եփրատի երկայնքով: Զինվորներն ու հեծյալ ոստիկանները շրջապատեցին ճամբարը, հարձակվեցին վրանների վրա՝ մահակներով ու մտրակներով հարվածելով, ապաստարանները քրքրելով ու մարդկանց դեպի եզրը հրելով, որտեղ շարասյուններն էին կազմվում: Երբ բոլոր նրանք, ովքեր կարող էին ոտքի վրա կանգնել ու ձիերի թափով վազել, վրաններից դուրս էին եկել՝ ստիպված լինելով մահամերձներին լքել, մեկնելու նշան տրվեց: Դեպի բլուրները գրեթե մի ժամ քայլելուց հետո, զլուխները թեքելով Դիպսիի հիվանդանոց-ճամբարի կողմը, բարձրացող թանձր ծուխ տեսան: Վրանները քարյուղով ցողել էին ու հրդեհել: Ծխի գույնից ու քուլաների ձևից հասկացան, որ վրանների լաթերի հետ միախառն այրվում էին նաև մարդկային չոր կամ դեռ խոնավ, մահամերձ մարմինները:

ՌԱՔՔԱ: ՎԵՑԵՆՈՐԴ ՕՂԱԿԸ: Ճամփորդությունն ավելի քան մեկ շաբաթ տևեց: Ցերեկը տոթ էր, բայց գիշերները չափազանց սառն էին մնացել: Մարդիկ հետզհետե ավելի դանդաղ էին քայլում, երերալով: Հեծյալ հսկիչների հրոցներին ու մտրակումների անտարբեր այս թմրած շարքերի համար գոնե այլևս զինված ավազակախմբերի հարձակումների վտանգը չկար, որովհետև կողոպտելու բան չէր մնացել: Միայն դադարներին էին արաբները մոտենում ու ցորենի տոպրակների դիմաց աղջիկներ գնում: Շարասյունը գետի աջ ափով էր առաջանում և, ի վերջո, հասավ Սեբկա՝ Ռաքքայի դիմացի հակառակ ափի ճամբարը, որտեղից քաղա-

քը հրաշալի և արգելված մի վայր էր թվում: Եփրատի ջուրը կարող էր հագեցնել գաղթականների ծարավը: Բայց ուտելիք գտնելու հավանականությունը գնալով նվազում էր: Երբեմն-երբեմն հեծյալ ոստիկանները ընթացքից նետելով՝ օտար հյուպատոսարանների կամ քրիստոնյա հաստատությունների ուղարկած սննդեղենի տոպրակներն էին բաժանում: Կույտերով նետվածի մեծ մասը կորչում էր: Մարդիկ քաշքշում էին այլուրի կամ շաքարի տոպրակները, իսկ փոշին ցրվում էր դրանք պատառոտող եղունգների արանքով: Մյուս օգնությունները, ինչպիսիք էին սիսեռի կամ բրնձի հատիկները, անատամ բերաններով ուտել հնարավոր չէր: Մարդիկ առանց ծամելու էին կուլ տալիս, բայց ստամոքսը մարսել չէր կարողանում կամ այդ հատկությունը կորցրած լինելու, կամ արնալուծի պատճառով մարսելու ժամանակ չունենալով: Ռուբենն այլևս որսի չէր գնում, քանի որ շներ հազվադեպ էին հանդիպում, իսկ գայլերը ոհմակներով էին թափառում: Հաճախ գայլերը հարձակվում էին աղբը քրքրողների վրա ու նրանց հոշոտում: Ռուբենը մյուսների հետ գնում էր մեռյալներին հավաքելու: Մասնակցում էր զանգվածային գերեզմաններ փորելուն. դյուրին գործողություն, որովհետև ստիպված չէր բահը կարծր կամ կաշուն հողի մեջ խրել, այլ բավարարվում էր ավազը թիակով վերցնելով, կարծես ավազաբլուրները մի կողմից մյուսն էր փոխադրում: Մակայն դժվար գործողություն էր՝ նկատի առնելով, որ փոսերը պետք է շատ ավելի խորը լինեին, այլապես հողմը կցրեր գերեզմանաթմբերը՝ կափարիչների պես դեսուդեն փոխադրելով ու մեռյալներին մերկացնելով:

Ոչ ոք չադոթեց խմբական գերեզմանների գլխավերևում: Այնտեղ հատկապես նոր մեռյալները թաղվեցին: Կոտորելու համար մեկուսացված ու հեշտ շրջապատելի վայրեր տարվող շարասյուններից ու համակենտրոնացման ճամբարներից մինչև գնդակահարելը, սովահար անելը, մահամերձներին սառած ջրի մեջ սուզելը կամ հրկիզելը, Անատոլիայի ճանապարհների վրա՝ Կոստանդնուպոլսից մինչև Դեյր էզ-Ջոր ու Մոսուլ հայերին ոչնչացնելու այս բոլոր միջոցները հետագայում նացիստներն օգտագործեցին հրեաների դեմ: Միայն թե նացիստական ճամբարներում բանտարկյալները համարակալված էին, և մահաշուք այդ հաշվառումը հրեա ազգի դեմ կատարված ոճիրների սարսափն ավելացրեց: Հայ ժողովրդին բնաջնջելու գործողությունների հետևանքով մնացած մեռյալներն ավելի շատ չեն, - եթե այդ ծավալով ոճիրների միջև կարելի է այսպիսի համեմատություն անցկացնել, - բայց ավելի անհաշիվ են: Մեր իմացած անունները հատկապես դահիճների, նահանգապետների, ճամբարների հրամանատարների, փաշաների, բեյերի, աղաների և չաուշների անուններ են: Չոհերը հազվադեպ են անուններ կրում: Մահը օղակ առ օղակ զգեստները հանելով՝ իր միջուկին երբեք ավելի մոտ չի եղել, մահը երբեք ավելի անանուն չի եղել: Չանգվածային գերեզմաններ սարքելու առնչությամբ դեռևս ավանդույթներ չեն ստեղծվել: Ինչպես փորել փոսը, ինչպես դարսել մեռյալներին՝ տակը տղամարդկանց, մեջտեղում՝ կանանց ու վրան՝ երեխաներին, ինչպես լվանալ, ինչպես հագցնել, ինչ աղոթք ասի քահանան և անդրաշխարհյան ինչ հանգստի մասին խոսի նա, ինչ տեսակ խաչ դրվի, քանի թև ունենա այդ խաչը և ինչ գրվի դրա վրա: Այս ամենից ոչ մեկը: Չանգվածային յուրաքանչյուր գերեզման իր կանոններն ունի, իսկ բոլորի համար միակ նման բնորոշ գիծը շտապ պատրաստելն է: Ինչը որ մերժում է հաստատված սովորույթների գոյության գաղափարը, որովհետև հապճեպության համար ավանդույթ չկա:

Գերեզմաններն անվանվում ու զարդարվում են, որպեսզի այն-

տեղ թաղվածները լիովին չմոռացվեն: Ձանգվածային գերեզմանները սարքվում են, որպեսզի այնտեղ նետված մեռյալները շուտով մոռացության մատնվեն: Ձանգվածային գերեզմանները պատմության ամենահանցավոր մասն են:

Անանուն մահվան այս միջուկից յոթ օդակ գծեցինք, կենտրոնը՝ Դեյր էզ-Ջորում: Դրանք ընդգրկած տարածության մեջ ամենալայն շրջագիծն անցնում է Մամուրայից, Դիարբեքիից ու Մոսուլից, որտեղ այն ժամանակ ավելի քան մեկ միլիոն մարդ մահացավ՝ հայոց ցեղասպանության բոլոր մեռյալների մոտավորապես երկու երրորդը: Գիտենք, որ նրանք այնտեղ էին, որ նրանցից, ովքեր մահվան օղակների մեջ մտան, ովքեր չմահմեղականացվեցին, ովքեր իբրև ստրուկ չծախվեցին կամ հարեմներին չհանձնվեցին, գրեթե ոչ ոք մահից չփրկվեց: Ով ասես կարող էր մեռնել ուր ասես: Այս աշխարհում չկա մի հայ ընտանիք, որը, ինչպես ջրապտույտում, մահվան օղակներում անհետացած անձինք չունենա: Ուրեմն կարող ես ուզածդ զանգվածային գերեզմանի վրա աղոթել՝ մտածելով, որ այնտեղ ընտանիքիդ պատկանող մեկը կա:

Ռուբենը գիտեր, որ լավ բան էր անում: Մահը ողջերի նվաստացուցիչ վիճակի համար էր ապաստան, իսկ զանգվածային գերեզմանները՝ մեռյալների անձար վիճակի համար: Բայց մի պատճառ էս կար, որ Գրիգոր Անգութը, ուժը տեղը տղամարդկանց հետ միասին, որոշել էին վրաններից մեռյալներին դուրս հանել ու զանգվածային գերեզմաններ փորել: Մի քանի օր առաջ մի վրանի տակից, որում բազմամարդ ընտանիք էր ապրում, առանց դեմքի մի մեռյալ էին հանել: Երկար ժամանակ գննեցին երեսը կերած դիակը, կարծես առնետները կրծած լինեին: Բայց ճամբարում ծակուծուկեր չկային, ուրեմն առնետներ էլ չկային: Բոլորը հասկացել էին, բայց ոչինչ չասացին, լռության երդում չարեցին՝ զգալով, որ ոչ ոք չէր կարող այդքան ահավոր բանը պատմել: Երբ նման նշանները շատացան, տղամարդիկ որոշեցին ամեն առավոտ ու երեկո անձնապես հետևել, որպեսզի ոչ մի դիակ վրանների տակ երկար ժամանակ չմնա:

Հալեպից նոր կայագրորներ ուղարկվեցին Ռաքքա և Սեբկա:

Ջինվորներն ու ոստիկանները ճամբարից հեռու էին մնում: Ճամբարը դժվար չէր պաշտպանել: Հյուսիսային եզրը գետափն էր, իսկ Եփրատը դժվար էր անցնել նույնիսկ կորովի տղամարդու համար: Աջ ու ձախ տարածվում էին դաշտերը, որոնց մեջ չէիր կարող թաքնվել, իսկ դեպի հարավ անապատն էր: Եվ, իսկապես, բացառությամբ պատանի սուրհանդակների, քչերին հաջողվեց փախչել՝ Ռաքքայի շուկաների խայտաբղետ ամբոխներին խառնվելով և այնտեղից շարասյուների հակառակ ուղղությամբ գնալով դեպի Բաբ ու Մամուրա կամ դեպի հյուսիս՝ Ուրֆա:

Ջինվորները միայն մարդկանց չէր, որ հսկում էին: Հսկում էին նաև անասուններին ու նույնիսկ թռչուններին: Ռաքքայի բնակիչներն ու բեդուիններն ցեղերը շատ էին վախենում գաղթականների տարածած համաճարակներից: Ուստի Հալեպի վալին արգելել էր շարասյուներից դուրս գերեզմանափորների մոտենալը, իսկ ճամբար ուղարկված սայլերը գաղթականներին էին թողնվել: Ու վերջում այն տեղերում, որտեղ ձիերին գաղթականներն իրենք չէին սպանել՝ ուտելու համար, դրանք գնդակահարվեցին, որպեսզի չփոխանցեն այն հիվանդությունները, որոնք դրանց անարգել թափառելու հետևանքով սաստկացել էին և անբուժելի դարձել:

Երբ զինվորներն իրենց սապոզները փայլեցնելիս, ձիերին քերելիս կամ գենքերը մաքրելիս՝ կանգնում ու դեպի վրաններն էին նայում, նոր համազգեստներով կարծես շքերթի պատրաստ լինե-

ին: Գաղթականների դեմքերը տեսնել հնարավոր չէր, որովհետև կամ շատ հեռու էին, կամ ձիավոր զինվորներն ուտելիք նետելու համար մոտենալիս վարձով էին անցնում, կամ էլ դա ոչ մի նշանակություն չունեին:

Այլապես զգացումը փոխադարձ էր: Գաղթականների համար զինվորները նույն դեմքն ունեին, իսկ զինվորների համար՝ աքսորյալներն անդեմ էին ու նույնիսկ մարդկային հատկություններից զուրկ, այնքան ժամանակ, քանի դեռ հրաման ունեին անգթորեն գնդակահարելու ուզածդ մեկին, ով կփորձեր վեցերորդ օղակից դուրս գալ՝ լինել դա մարդ, կենդանի կամ թռչուն:

Մինչ գաղթականները հոգնության ու սովի ամիսներից հետո ուժասպառ էին եղել, զինվորները միշտ հանգիստ էին, որովհետև հետզհետե ավելի հեշտ էր դառնում գաղթականներին հսկելը, իսկ դադարները հաճախակի էին դառնում: Իսկ ինչը որ էլ ավելի էր տարբերում նրանց, այն էր, որ մինչ գաղթականները հետզհետե մերկանում ու ցնցոտիապատ էին դառնում, զինվորների համազգեստները նորոգվում էին, ավելի փայլուն երևում, իսկ նրանց ձիերը՝ ավելի պճնված:

Տղամարդկանց հաջողվել էր այնպես կազմակերպել, որ մեռյալներին արագ հավաքեին: Աբուհահարից ու Համամից մի նոր շարասյան ժամանմանն անմիջապես հետևում էր մեռյալների հավաքման ցանցի ընդլայնումը: Սկսել էին աշխատել մահվան ռիթմով: Ինչը որ չարաբաստիկ հետևանքներ էր ունենալու, որովհետև մահը, տեսնելով, որ իրենից առաջ են անցնում, սաստկացրեց թափը: Մյուս կողմից, զինվորները մտահոգվեցին՝ հասկանալով, որ Սեբկայի ճամբարում մարդիկ մի այլ կարգի էին ենթարկվում, քան մահվանը, իսկ նա, ով համարձակվում է մահվանն ընդդիմանալ, կարող է այս աշխարհում ուզածդ մեկին ընդդիմանալ: Այդ պատճառով էլ խառնաշփոթ առաջացնելու նպատակով արագացրին շարասյանների դեպի Դեյր էզ-Ջոր գնալը: Մակայն Սեբկայի ճամբարը մեռյալներ հավաքողների խմբերը վերակազմեց, սրանք վերաամբողջանում էին ահից, ոչ մահվան ահից, այլ իրենք իրենց ահից:

Կազմակերպվելու այդ ուժը, այնքան անսովոր՝ ցնցոտիապատ ու գրեթե մահամերձ մարդկանց ճամբարի համար, կարելի էր հանդուրժել Սեբկայում, որտեղ ընդամենը մի քանի հազար վրան կար, բայց կարող էր վտանգավոր լինել Դեյր էզ-Ջորում՝ յոթերորդ օղակի կենտրոնում, որտեղ տասնյակ հազարավոր գաղթականներ կային:

Ուստի մի առավոտ հրամանատարը հրահանգեց, որ տասնհինգից մինչև վաթսուս տարեկան բոլոր տղամարդիկ հավաքվեն ճամբարի եզրին: Ուղարկվելու էին հողային աշխատանքների: Եվ, անշուշտ, կերակուր ու խմելու ջուր էին ստանալու: Նրանք վրաններից դուրս ելան, ու ոմանք մտածեցին, որ եթե աշխատանքի են ուղարկվում, ուրեմն անհրաժեշտ են, հետևաբար, իրենց խնայելու էին: Մյուսները երկմտալով դուրս եկան ու միայն չառուների սպառնալիքներից հետո, թե ձիերով իրենց հետևից վրանները կմտնեն: Իսկ մի մասն էլ, ինչպես Ռուբենն էր, անտարբեր գնացին: Այն ժամանակից, ինչ հրեշտակների որսորդ էր դարձել և իր համար միևնույն էր, թե դրանք ինչ գույնի էին, նրան հետաքրքրում էր միայն փետուրների տակի ջրոտ միսը, Ռուբենը ներքնապես դատարկվել էր ու միայն իր երեխաներին պաշտպանելու համար էր ապրում: Հենց այդ պատճառով, երբ Սահակը նրա հետևից քայլեց՝ համարելով, որ շնորհիվ իր տասնչորս տարեկան հասակի կարող է տղամարդկանց շարքը մտնել, Ռուբենը կանգնեցրեց նրան և երկու

գույգ ապտակ հասցրեց՝ տղային շշմեցնելով, բայց նաև հանգստացնելով:

Ունանք համառորեն փորձեցին թաքնված մնալ: Ինչպես հարևան վրանի իրենց հետ ընկերացած կնոջ ամուսինը: Միասին մեկ հոգի էին, հետևաբար, նրանցից յուրաքանչյուրը կարող էր մյուսի կերպարանքն առնել: Բարձրահասակ, նեղ կոնքերով ու միջին չափի կրծքերով, տղամարդու զգեստներ հագած կինը շարասյունների կազմավորման ժամանակ զինվորների ուշադրությունը չէր գրավում ու նրան հաջողվում էր կին փնտրողներից թաքնվել: Իսկ տղամարդը, նիհար և անմազ այտերով, վայրի կյանքի պատճառով մազերը երկարած, կնոջ շորեր հագավ՝ անհանգիստ սպասելով վրանների ստուգմանը: Ինչը որ տեղի չունեցավ: Երբ տղամարդիկ շարվեցին, ու նրանց հաշվեցին և համարելով, որ հինգ հարյուրը գոհացուցիչ թիվ է, մեկնելու հրաման տրվեց:

Այսպես թե այնպես, շարասյուններում տղամարդիկ պակասել էին: Դեպի Դեյր էզ-Ջոր տեղաշարժման ընթացքում տղամարդիկ զինված հարձակումների գերադասելի թիրախ էին դարձել: Որոշ տեղեր նույնիսկ, չսխալվելու համար, շարասյունները սկզբից էին բաժանվել տղամարդկանց ու կանանց խմբերի, իսկ տղամարդիկ ճանապարհի վրա սպանվել էին զինված ավազակախմբերի դարանակալ հարձակումների ընթացքում կամ պարզապես հսկող զինվորների կողմից: Այդպիսով, շարասյունների մեծ մասը կազմված էին կանանցից, երեխաներից ու ծերունիներից, այս վերջինները գրեթե բոլորը մինչև Սերկա կորան՝ մյուսների հետ համաքայլ գնալ չկարողանալու պատճառով: Շարասյունների մի մասը, մանավանդ արևմուտքից եկողները, մինչև այդտեղ ավելի քան հազար կիլոմետր էին կտրել:

Ոչ թե զայրույթից, այլ հուսահատությունից տրված երկու գույգ ապտակները հոր՝ Ռուբեն Շեյթանյանի մասին Սահակի վերջին հիշատակը եղան: Տղամարդկանց դեպի հարավ՝ դեպի Սիրիայի անապատը տարան ու գնդակահարեցին: Իսկ մահը հաղթականորեն վերադարձավ՝ ջրամամուռի պես ճահճանալով ճամբարի վրա: Երբ շարասյունը, որտեղ մտան Հերմինեն՝ իր երկու երեխաների հետ և այն երկու սիրահարները, ճանապարհ ընկավ, գարունը վերջանալու վրա էր: Եփրատի ջրերը հանդարտվել ու պարզվել էին: Քանի որ Եփրատի երկու ակունքների երկայնքին տարածվող վիլայեթներն արդեն հայագուրկ էին, գետի միջի դիակները հագվադեպ դարձան, իսկ նոր դիակներն այլևս չփոխարինեցին ձկների կերածներին, ջրապտույտների կլանածներին և ափերից կախվածներին: Սովորական գերեզմանի նման, Եփրատը փակվել էր ու կյանքի համար վերստին տեղ բացել:

Եթե Մեսքենեից դեպի Դեյր էզ-Ջոր ճամփան ուրիշ տեղից անցներ, գաղթականները, հավանաբար ծարավի պատճառով, վաղուց մահացած կլինեին, մանավանդ տոթն սկսվելիս: Բայց գետը, որ երկար ժամանակ մեռած ջուրը կենդանի ջրի հետ էր խառնել, այժմ իր գուլալ ալիքներն էր ընծայում: Եվ այդպես էլ մնաց ամբողջ ճանապարհին՝ մինչև Դեյր էզ-Ջոր, որտեղ Եփրատը շարասյունները բախտի քմահաճույքին թողեց և իջավ Տիգրիսի հետ հանդիպելու:

ԴԵՅՐ ԷԶ-ՋՈՐ: ՎԵՐՋԻՆ ՕՂԱԿԸ: Շարասյունն ավելի շուտ ուրվականներից էր կազմված: Հողմի բերանին թեթև էին թվում. ընկնող թռչունների մի երամ, այլ ոչ թե մարդկանց շարան: Լուսանկարները, որ արել էին օտար ճամփորդները, ովքեր հաջողացրել էին մոտենալ շարասյուններին կամ լուսանկարել հետ մնացած, ճամփի եզրին ընկած ու մահվան սպասող անկարողներին, դեպի Դեյր էզ-Ջոր ճանապարհին պատկերում են հատկապես երեխա-

ների: Դեպի յոթերորդ օղակը տանող ճանապարհը մի տեսակ երեխաների խաչակրություն էր: Բոլոր անգլեն խաչակրությունների պես նույն ճակատագիրն ունենալով: Այդ լուսանկարներում երեխաները կմախքացած են, սմբած մարմնով, փոս ընկած փորով, որովայնի խորշի վրա պողպատե զսպանակի նման թպրտացող կողերով, ճյուղերի պես բարակ թներով ու ոտքերով, գլուխներն անհամաչափորեն մեծ, նույնպես նաև ակնախորշերը, որտեղ ակնագնդերը դուրս են գալիս ակնապիճներից կամ գլխի խորքը թաղվում: Երեխաները նայում են առանց դեմքի որևէ արտահայտության, միայն հայացքն է մտամոլոր, կարծես նայում են մի այլ աշխարհից. ձեռք չեն երկարում, ոչինչ չեն ուզում: Նրանց աչքերի մեջ դիտելով, հասկանալու և մեղադրելու համար շատ կարճ ապրեցին: Ոչ էլ աղաչանք է, որովհետև մոռացել են, թե ինչ է նշանակում սովը, ոչ էլ՝ տխրություն, որովհետև մանկության հաճույքները չեն ապրել, ոչ էլ՝ մոռացություն, որովհետև հուշեր չունեն: Նրանց աչքերում դատարկություն է: Անէություն, որ դեպի անդրաշխարհ կիսաբաց նեղ պատուհան է:

Մոր տապալվելը մահվան էր դատապարտում նաև մանկանը: Հաճախ երեխան մնում էր մոր գլխավերևում՝ նրա հետ մահվան սպասելով: Հերմինեն աղջկա դեմքի վրա ահով նկատեց տիֆի կարմրությունը: Տոթի պատճառով կարմիր բծերը շուտով տարածվեցին: Հերմինեն առաջ էր գնում աղջկա ուսերը գրկած ու արտասովելով: Սահակն ուզեց մորն օգնել, բայց մայրը նրան չթողեց աղջկան մոտենալ՝ հիվանդությունից պաշտպանելու համար: Ինքն էլ այլևս Սահակին չդիպավ, միայն քնած ժամանակ անհանգիստ հայացքով գնում էր նրան՝ հիվանդության նշաններ որոնելով: Երբեմն վախեցած՝ կարծում էր, թե գտել է: Մի ուրիշ անգամ թեթևացած շունչ էր քաշում, քանի որ դրանք ընդամենը փոշու բծեր էին, որոնք քրտինքի մեջ թաթախված՝ չորացած արյան գույն էին ստացել: Չսպեց իրեն, որ տղային քնած ժամանակ չգրկի, այլ միայն շոյում էր աղջկան՝ առանց հոգ տանելու, որ ինքն էլ կհիվանդանա, նույնիսկ դիտմամբ, որովհետև աղջկան անդրաշխարհում մենակ թողնելու միտքը սարսափեցնում էր Հերմինեին և չիմանալով, թե ինչպես բուժել դստերը՝ աղոթում էր, որ միասին մահանան:

Սեբկայից Դեյր էգ-Ջոր ճանապարհը բոլորից ամենաերկարը և ամենաահաբերը եղավ: Մոտավորապես հարյուր կիլոմետր ոտքի ճանապարհ: Քանի որ տոթը հեծյալ զինվորներին ևս նեղում էր, ու սրանք թամբի վրա նիհիում էին ավազից այրվող ներբաններով քարշ եկող շարասյուների կողքին, որոշեցին քայլել գիշերով, իսկ ցերեկը նստում էին ափին, որտեղ գետի կողմից գովացնող մեղմ քամի էր փչում: Մնացած սակավ տղամարդիկ կործանիչ շոգից պաշտպանվելու համար հանպատրաստից վրաններ էին շինում: Ոմանք խենթանում էին քնի մեջ. դողում էին, թպրտում, ու հարկ էր լինում ուժգին հարվածել նրանց, որ արթնանան ու քնի մեջ չխեղդվեն: Ուրիշներն արթուն վիճակում էին խելքը թոցնում և ուզում էին հեռու մեկնել, բայց ճամփան բավական մոտ էր վերջանում, որովհետև, զգուշանալու հատկությունը կորցրած լինելով՝ ընկնում էին փամփուշտների զարկերից:

Անսովեր շարասյուներ էին: Ցերեկը գետնին պառկած, սովեր չէին զգում կամ այնտեղ, որտեղ սովերի մի կարկատան էր կարողանում մտնել, դրա մեջ էին փաթաթվում՝ անկողնի նման: Սովերները քրտինքի պես կաչում էին մարմնին: Գիշերը երերալով քայլելով, քարերի վրա սայթաքելով կամ ճամփեզրի փոսերի մեջ ընկնելով՝ վերածվում էին իրենց սեփական սովերներին: Շարասյուներն

այնքան թուլացած էին, որ այլևս ստվեր գցելու ուժ անգամ չունեին, որպեսզի դրանք ուռվանի պես իրենց հետևից ձգեին: Անստվեր շարասյուներին գրեթե երկու շաբաթ հարկավոր եղավ Մեքլայից Դեյր Էզ-Ձոր հասնելու համար:

Ճամբարը Եփրատի աջ ափին էր: Այս անգամ վրանները տասնյակ հազարներով էին հաշվվում: Դեյր Էզ-Ձորը վերջին կենտրոնն էր դեպի արևելք, որտեղ այդպիսի ճամբարները դեռևս կազմավորվում էին: Դեյր Էզ-Ձորից դեպի այս աշխարհ անցում այլևս չկար:

Ուստի, աքսորյալներին ոչ մի ուտելիք չտրվեց: Քանի որ բուսականությունը նոսր էր, իսկ դիակներից գայթակղված անապատի կենդանիներին սպանել կարողացող տղամարդիկ քչացել էին, սովն անհանդուրժելի էր դարձել: Մարմիններն այնքան էին թուլացել, որ հիվանդություններն ավելի դանդաղ էին տարածվում, որովհետև մարմինն այլևս դրանք կրելու ուժ իսկ չուներ: Տիֆով հիվանդները տենդ չէին ունենում, որովհետև այլևս հակամարմիններ չէին ստեղծում: Սովի առջև մյուս հիվանդությունները նահանջեցին՝ թողնելով, որ սովը որովայնը կրծոտի, ոսկորների վրայի մաշկը ձգի և աղիքները չորացնի:

Միջադեպեր հետզհետե ավելի քիչ էին տեղի ունենում: Երբ ճամբարի ղեկավարությունը հայտնաբերեց Լևոն Շաշյանի շուրջը եղած խումբը, որ կազմակերպել էր ոչ միայն ճամբարից ճամբար որբերի մաշկի վրա առաքված կենդանի թերթերը, այլ նաև Մեքլայի ճամբարի նման՝ հնարավորինս դեղերով ու սննդով մատակարարելու մի համակարգ և այնպիսի խմբեր, որոնց հաջողվում էր մահվան ռիթմով դիակները թաղել, Լևոն Շաշյանին ճամբարից հանեցին ու նույն ինքը՝ ճամբարի պետ Ջեքի փաշան, գազանաբար սպանեց նրան: Ճամբարի ներքին կազմակերպման բոլոր միջոցները կասեցվեցին և, զինվորների կարծիքով, այսպիսով ըմբոստության որևէ վտանգ վերացել էր, իսկ ճամբարը լեթարգիայի մեջ ընկավ: Ըմբոստության հանդեպ բանակի վախը կարող էր չափազանց թվալ, քանի որ զինվորները լավ հանդերձավորված, ձանձրույթի աստիճանի հանգստացած և մինչև ատամները զինված էին, իսկ աքսորյալները՝ է՛լ ավելի կմախքացած, բզկտված և մահվան արբեցության մեջ է՛լ ավելի շշմած: Բայց զինվորները, ինչպես նաև Հալեպի և Դեյր Էզ-Ձորի իշխանությունները, իսկապես վախենում էին: Ջինվորները սովորել էին կովել ուրիշ զինվորների դեմ, իսկ նրանց զենքերն այնպես էին սարքված, որ մահից վախեցող թշնամու դեմ սպառնալիք լինեն: Այլևս ոչնչից չվախեցողներին սարսափեցնող զենքեր դեռևս չէին ստեղծվել: Ուժասպառ ու սովից հյուծված աքսորյալները չէին գիտակցում, որ հենց մահանալու մտքի հետ հաշտեցումն էլ իրենց սարսափազդու ուժն էր: Թեև մահվան առջև վախի բացակայության այս ուժը յուրաքանչյուր օղակով անցնելիս աճում էր, մահվան յոթ օղակներով անցնող ճանապարհն ըմբոստությունից զերծ եղավ: Շարասյունների ճանապարհն ավելի շուտ մահվան սպասում էր: Մահը, թափառելով ճամբարում, դարձել էր նրանցից մեկը ու Դեյր Էզ-Ձորի օղակների գոհերից մեկը եղավ:

Իսկ դրսում այն լույ խուլ մրմունջի պես էր լսվում: Գերմանացի մի ճամփորդ, որին հաջողվեց Դեյր Էզ-Ձորի աքսորյալներին մոտիկից տեսնել, խորապես ցնցվեց ոչ այնքան հայտնի երևույթներից, որ իրենց ամբողջ սարսափով տեսանելի են լուսանկարներում, որքան մի մանրամասնից, այդ ահավոր տեղում արտասովոր մարդիկ չտեսավ: Կամ, ավելի ճիշտ, չտեսավ այն, ինչը սովորաբար նշանակում է արտասովոր մարդ, այսինքն՝ չտեսավ

արցունքներ:

Բայց ճիշտ չէ, թե մարդիկ չէին արտասվում: Միայն թե այլ ձևով էին արտասվում: Ովքեր դեռևս նստելու ուժ ունեին, օրորվում էին, մյուսները դեպի երկինք լայն բացած աչքերով էին արտասվում: Սակայն լացը շարունակական տնքոցի պես էր, ցածրաձայն, որը հազարավոր կրծքերում կրկնվող ձայնակցման հանգույն էր լսվում: Լացը ոչ թե հետագիծ էր դեմքի վրա, այլ հնչյուն: Քանի որ այդ ձայնակցումն անվերջորեն հոսելով ու շրջակա աշխարհի հետ ներդաշնակվելով՝ սկսել էր ավազաբլուրների միջև հողմի շառաչի կամ Եփրատի ջրերի հոսքի պես հնչել, լացը ոչ մի պահ չդադարեց, մինչև որ Դեյր էզ-Ջորի վերջին շարայուները հասան այն սարահարթերին, որտեղ գաղթականներին սպանում էին: Այդ չոր լացն աղոթքի փոխարեն էր, անեծքի, լռության ու խոստովանության, իսկ ոմանց համար՝ նաև քնի: Շատերն այդպես արտասվելով էին քուն մտնում, ուրիշներն արտասվելով էին մահանում, ու լացը երգեհոնի փողի պես դեռ թրթռում էր կարկամած կրծքում: Այդ լացը լսեցի, երբ Սեդրակ մեծ հայրս պարտեզի ճոճաթոռում բազմած մրմնջում էր կամ երբ Կարապետ մեծ հայրս իր սենյակում կողպվում ու ջութակ նվագելու պահին կանգ էր առնում:

Տնքոցով լացն սկզբում զինվորներին գրգռում էր, մանավանդ որ ջրի ու հողմի կողմից կրկնվելով՝ կարծես ամեն տեղից էր լսվում: Հետո վարժվեցին, ձայնակցումն ամեն կարգի պահապանից ավելի վստահելի էր. այնքան ժամանակ, քանի դեռ հավասարապես էր հնչում, նշանակում էր, որ անսովոր ոչինչ չէր կատարվում: Եթե մարդիկ մահանալու կամ մեռյալներին ողբալու փոխարեն մի այլ զբաղմունք գտնելու լինեին, այն կդադարեր: Բացի խենթանալու հանգամանքներից, որոնք ավելի հաճախ քիչ այն կողմ կրծքին արձակած փամփուշտով էին վերջանում, գաղթականները չըմբոստացան: Այնքան էլ շուտ չմահացան, որովհետև երևում էր, որ մահը երկար ժամանակ գաղթականների հետ ապրելով՝ սկսել էր նրանց սիրել: Թեև ճամբարները մի քանի ամիս հետո քանդվեցին, իսկ այդ ժամանակամիջոցում գրեթե բոլոր գաղթականներն սպանվեցին, Դեյր էզ-Ջորում ձայնակցումը չդադարեց:

Սակայն այդ ընթացքում ականջները սրելով դեպի Եփրատի հունից էլ ավելի լայն իր հունը բացող այդ հնչյունը՝ թուրք զինվորները շատ մտահոգված չէին Դեյր էզ-Ջորի ճամբարի հսկողությանմբ: Հյուսիսում և արևելքում հսկողության հարկ չկար, որովհետև այնտեղ անապատն էր: Ով որ փորձեր այդ ուղղությամբ փախչել, ողջ մնալու հնար չէր ունենա: Հետո էլ Եփրատը, որ եզերում էր ճամբարը, նույնպես որևէ հույս չէր տալիս:

Դեյր էզ-Ջորն առժամանակ բոլոր շարայուների հասնելու համար նշանակված տեղը եղավ, իսկ իշխանությունները չէին որոշել, թե այնուհետև ինչ են անելու: Հավանաբար կարծում էին, թե այդ ճանապարհներին շարայուները կամացկամաց կանհետանան ու Դեյր էզ-Ջորը մի տեսակ լազարեթ կլինի, ուր տեղ հասած մարդիկ արագորեն հոգիները կավանդեն, ինչպես Թեֆրիջեի ու Լալեի *խաստախաններում*: Ի հեճուկս այն բոլոր առիթների, որ նրանց առատորեն ընծայվեցին, մի քանի հարյուր հազար աքսորյալ համառորեն ապրեց: Կամ, ավելի շուտ, պարզապես մոռացան մահանալ: Ճամբարը հետզհետե ավելի խճողված ու կառավարելը դժվար էր դառնում՝ ոչ այնքան մարդկանց, որքան նրանց վրա եկած համաճարակների ու ժահրերի պատճառով: Քանի որ կայսրության մայրաքաղաքի իշխանությունները հայկական հարցի շտապ ու վերջնական լուծում էին ցանկանում, Դեյր էզ-Ջորը վերջնական տեղից տարանցիկ կետ դարձավ: Բայց տարանցում ոչ թե երկու

ճամբարների, այլ երկու աշխարհների միջև:

Բոլոր տառապանքների մեջ հիվանդություններից ու ցավերից ավելի ուժեղը սովը եղավ: Մենքի որևէ աղբյուրից զրկված, պատահական ուտելիքի վրա հույսը դնելով՝ խոտերից, տտիպ մրգերից կամ վայրի մեղրից մինչև անասունների լեշեր, Դեյր էզ-Ձորի ճամբարը մտնում էր ցնորային վիճակի մեջ: Կամայաբացած մարմինները երեքավով գնում էին Եփրատից ջուր խմելու, հետո օրորվելով ու տնքալով, դեմքերը տոթին արած նստում՝ կարծես բույսերի պես լույսով սնվելով: Ումանք, բացի սովից, որևէ այլ բանի կամ զգացման մեջ իմաստ չտեսնելով՝ բերաններն էին տանում ձեռքն ընկած ամեն ինչ, կրծում էին ծառի կեղև, քրտինքի աղի համով ներծծված լաթեր կամ կղկղանք, որ սովի պատճառով, այծերի կտտորի պես պինդ էր ու մանր: Լևոն Շաշյանի և այն անձանց սպանությունից հետո, ովքեր խմբական գերեզմաններում տքնելով՝ փորձում էին մեռյալներին թաքցնել, դիակները նորից սկսեցին վրանների տակ մնալ: Վերստին հայտնվեցին անդեմ, անձեռուտ մեռելներ: Նրանք, ովքեր մի քանի օրը մեկ վրաններում շրջում էին կրծոտված կամ քայքայված մարմինները հանելու համար, այլևս չէին սարսափում: Ումանք դա նույնիսկ դիտավորությամբ էին անում, ազդեցության կամ բորենիների որսորդներից դարձել էին մեռելների որսորդներ: Ուստի վրաններում մարդիկ զգուշությամբ գնում էին նրանց և իրենց մեռելներին պատահականորեն չէին հանձնում:

Նույնիսկ այդ պարագայում գործողությունը հեշտ չէր: Հետզհետե ավելի դժվար էր դառնում մահացածներին ողջերից տարբերելը: Ողջերը ժամեր շարունակ մնում էին անշարժ ու հաճախ քնում աչքերը բաց, իսկ բիբերն այրող տոթի պատճառով կուրանում էին: Իսկ մեռյալները երբեմն ցնցվում էին օրվա ու գիշերվա միջև ջերմաստիճանի մեծ տարբերության պատճառով, երբ հողերը կակղում էին արևի տակ կամ, ընդհակառակը, գիշերվա սառնամանիքի ժամանակ կծկվում: Հետևաբար, սկսեցին մարմինները պատահականորեն հավաքել, իսկ ումանք վերադառնում էին փոսի եզրից՝ մյուսների վրա նետվելիս տնքոցից արթնանալով:

Երբ մեկնման մասին ազդարարվեց, շարասյուներն սկսեցին նորից կազմել: Մասամբ դեպի արևելք՝ Մարատ ու Մուվար ուղղվեցին: Մյուսները Դամասկոսի ճամփան բռնելով՝ գնացին դեպի արևմուտք: Երկու ուղղություններով էլ հանգուցալուծումը նույնն էր: Երբ հասնում էին որևէ սարահարթի, որն առաջապահ գորքը հարմար էր համարում, զինվորները հեռանում էին, հետո շարասյունը շրջապատում ու բոլոր կողմերից հրացաններով կրակում: Երբ ոչ ոք այլևս ոտքի վրա չէր մնում, սվինը հրացանի փողի մեջ էին խրում, հանում էին յաթաղաններն ու ջարդելով անցնում մարմինների վրայով, որպեսզի ինչը որ փամփուշտը չէր հասցրել, սայրն ավարտեր: Շարասյուները տատանվում էին երեքից հինգ հարյուր հոգու արանքում: Ամեն անգամ նրանց ճակատագիրը նույնն էր, այն տարբերությամբ միայն, որ երբեմն զինվորներն այդ գործը բեղունիներին էին թողում՝ բավարարվելով վերջում ստուգելով, հավաստիանալու համար, որ ամեն ինչ կարգին է:

Հերմինեն, դստերը գիրկն առած, մահվան էր սպասում: Աղջիկը հաճախ էր տենդից ցնցվում, իսկ գիշերները Հերմինեն նրա վրա էր պառկում՝ փորձելով տաքացնել: Սահակին հաջողվեց խակ արմավների մի բուռ, մի անգամ նույնիսկ ինչ-որ զինվորի թամբի տակից ընկած մի նուռ բերել: Թթվաքաղցրավուն հատիկները լեզվի տակ երկար ժամանակ պահելով՝ մեկիկմեկիկ կերան: Մյուս վրանում, երկու սիրահարները սովից տառապում էին՝ չկարողա-

նալով սնունդ գտնել, քանի որ կինը տղամարդուն բացարձակապես չէր թողնում ապաստանից դուրս գալ, որովհետև հնարավոր էր, որ զինվորները նրան տեսնեին ու սպանեին: Թվում էր, որ մեկը մյուսով էր սնվում, և այդպես իրար ագուցված՝ դիմացան: Մինչև մի երեկո, երբ ցուրտն ընկնելու հետ իրար գրկից բաժանվեցին ու ոտքի ելան: Հագուստները հանեցին ու կինը դրանք Հերմինենին պարզեց: «Երախային վրան դիր, – ասաց:– Ցուրտն կդողա»: Ամբողջովին մերկ էին: Հերմինենն զարմանքով նայեց նրանց, բայց ոչ թե մերկության պատճառով, ինչը որպես որևէ այլ բան, որ կարող էր պատահել մարմնի հետ, ճամբարում սովորական էր: Այլ որ անասելի գեղեցիկ էին: Հայացքներում տարօրինակ մի լույս կար, մազերը հարթ էին ու փայլում էին ճակատների շուրջը, մաշկերը կուրացուցիչ սպիտակ էին, կնոջ կոնքերն աղեղվել էին ու կուրծքը կլորացել, իսկ տղամարդու մկանները ոսկորների շուրջը փաթաթվել ու պրկվել էին: Լույսը կաթիլկաթիլ հավաքվել էր ուսերի վրա, ու նրանց շուրջը ստվեր չկար: «Եկանք մնաք բարով ըսելու», – ասաց տղամարդը, բայց շուրթերը կարծես չէին շարժվում: Հետո կնոջ ձեռքը բռնեց ու միասին հեռացան. ուրվապատկերները, գուցե նաև մարմինների լուսավոր եզրագծի շնորհիվ, երկար ժամանակ մարդկանց հայացքների մեջ մնացին: Այնքան լուսավոր և անվրդով էին սահում ավազների վրայով, որ Հերմինենն ու Սահակը լարված սպասում էին կրակոցներին: Բայց ոչինչ չպատահեց, ոչ էլ մթնելուց հետո, երբ խավարը կլանեց նրանց մարմինների կավն ու մեղրամոմը: Միայն զմուռսի և սաթի մարմրող անձոխի ծխահոտի պես անորոշ ինչ-որ հոտ մնաց: «Փրկվեցան», – շշնջաց Հերմինեն: «Կերթամ իրենց ետ կանչեմ, – ասաց Սահակը:– Հոն անապատ է, պիտի մեռնին: Ոչ մեկը ավազներու մեջեն ողջ չի վերադարձավ»: Հերմինեն տղային նշան արեց նստելու և նրա մոտ գնաց: «Ձգե՛... Գեղեցիկ և անմեղ են: Կմտածեմ, որ Ռուբենը իրավունք ունի»: Իր ամուսնու մասին ներկա ժամանակով էր խոսում, ինչպես մի անձնավորության մասին, որ հեռու է գնացել ու վերդառնալու է, թեև այդ ժամանակ Ռուբենին Մերկայի տղամարդկանց շարասյան հետ միասին սպանել էին: «Ռուբենը իրավունք ունի: Աստված մեռավ: Ձգե՛, թող առաջ երթան: Հոս, ուր վերջին անգամ տեսար իրենց, Դեյր էգՋորի ճամբարին եզերքը, Եդեմի պարտեզին սահմանն է: Դրախտին դուռն է երկու քայլ անդին: Վերադարձանք հոն, ուրտեղեն սկիզբներու սկիզբեն մեկնեցանք: Բայց այս ընթացքին աշխարհը բոլորովին ավրվեցավ: Կարելի է իրենք աշխարհը սկիզբեն առնեն և ուրիշ Աստված մը ստեղծեն»:

Սահակը մթության մեջ տեսավ, թե որտեղ տղամարդու և կնոջ իրարակից մարմինները մի անգամ ևս բոցկլտացին ու հետո մարեցին: Ու հանկարծ մի թարմ ու խշշան ալեծփանք դեպի տղայի ճակատը եկավ: Կարծես այդ երկու անձանց ճանապարհին ավազը մի կողմ էր քաշվել՝ թողնելով, որ հողից գեղատեսիլ ծառեր բուսնեն: Նրանց առջև մի շատ ավելի մեծ գետի թևերն էին միանում. Տիգրիսի ու Եփրատի: Իսկ այրը, այդ ջրերի ոռոգած պարտեզը գնալով, թողեց իր ընտանիքը՝ հորն ու մորը և իր կնոջը միացավ, ու նրանք մի մարմին դարձան:

Բայց այստեղ, մարդկանց մեջ, այն ժամանակ, երբ շարասյուները, ամեն անգամ մի քանի հարյուր մարդ, դեպի Մուվար կամ Դամասկոսի ճանապարհով մահապատժի տեղի վերածված սարահարթերն էին գնում, ուրիշ շարասյուներ արևմուտքից էին գալիս՝ դեպի մահվան վերջին օղակն իջնելով: 1916 թվականի այդ հուլիսին ամբոխներ էին անջատվում, ամբոխներ էին կազմվում և, ի հեճուկս այդ եռուզեռի, Դեյր էգ-Ջորի ճամբարն անփոփոխ, կար-

ծես անշարժ էր մնում: Շրջակա վայրերը ոսկորներով էին լցվել: Վերջին սահմանն անցել էին: Ողջերը մեռյալներին էին ծառայում՝ նրանց թաղումը դարձնելով իրենց միակ զբաղմունքը: Մեռյալները ողջերին էին ծառայում՝ պարզ կա զիշերներին հագուստների պես նրանց տաքացնելով ու խելագարվածներին իրենց որպես նշխարք ընծայելով:

Հերմիներն շվարած աչքերով էր նայում դստերը: Ամառային տոթը, որ մարմինների մեջ եղած աղերը դեռևս միմյանց շաղկապող ջրի կաթիլները դուրս էր քաշում, սկսել էր մարդկանց սմբացնելով մահվան հասցնել: Ողջերն ու մեռյալները, ովքեր անշարժությամբ ու մերթմերթ ցնցումներով էին միմյանց նմանվում, այժմ սկսել էին նմանվել նաև այտերի մուգ, չորացած գույնի պատճառով:

Իրար հաջորդող մահապատիժների ռիթմի համեմատ համակենտրոնացման ճամբարը նույն տարվա աշնանը կազմալուծվելու էր: Նույնիսկ առանց մահապատիժների, Դեյր Էգ-Ջորի աքսորի պայմաններում ոչ ոք մինչև ձմեռ չէր հասցնի ապրել: Այդ ամռանը հատկապես երեխաները մահացան: Շատերը չոր կմախքների պես կծկված ու սևացած՝ վրանների մեջ անթաղ էին մնում: Հերմիներն,

ինքն էլ չիմանալով ինչ հուսալով, բայց ամբողջ հոգով ցանկանալով այդ տեղից հեռանալ՝ անհամբեր սպասում էր որևէ շարասյան մեջ ընդգրկվելուն: Սակայն, աղջիկն անշարժ աչքերով երբեմն շնջում էր. «Անոթի եմ»: Երբ նրա տնքոցը դարձավ շարունակական՝ արտաշնչելիս ողբագին, իսկ ներշնչելիս՝ խզզացող, Հերմիներն սկսեց վրանների արանքներում շրջել: Մի ժամ հետո ձեռքերը դատարկ վերադարձավ: «Չովին, չէ՞», – մարած ձայնով հարցրեց աղջիկը: Նա դատարկ հայացքով գլուխն օրօրեց: «Դուն ալ վերջեն ինձմե չտաս իրենց...», – տխուր ժպտաց երեխան: Հերմիներն ձեռքն այնքան հուզված տարավ բերանին, որ մոռացավ տղային վռնդել, երբ նա իրեն շոյելու մոտեցավ: Բոլորովին անսովոր կերպով նայեց նրան, հետո դաստակից բռնեց: «Եկո՛ւր», – ասաց մի նոր ձայնով:

Վրանից դուրս քաշեց դեպի եզրը, ջրի հոսանքն ի վեր, որտեղ արաբներն անասունները ջրելու էին բերում: Կանգնած մնաց որդու մոտ՝ ջրի ափին, աղոթելով, որ ինչ որ կատարվելու է, արագ կատարվի:

Մոտեցող արաբը չոր, բայց հետաքրքրությամբ զննեց նրանց, մանավանդ տղային: Քանի որ Հերմիներն ու տղան թուրքերեն էին խոսում, կարող էին հասկացվել այն ընդհանուր բառերով, որոնք Մուհամմեդն էր թողել իր հավատքի սփռման տարածքի վրա: Բայց այլևս հարկ չկար, որովհետև շատ լավ գիտեին կատարվելիքը: Այդ երևույթը հազարավոր անգամներ էր կրկնվել շարասյուների ճանապարհին կամ ճամփեզրերին: Եվ, որպեսզի ամեն ինչ պարզ լինի, Հերմիներն Մահակի ձեռքը թողեց ու նրան մի քայլ առաջ հրեց՝ ափը տղայի ուսին դրած, չլինի թե տղան վազելով հետ փախչի:

Ի հեճուկս իր թուրքության, Մահակն առողջ էր թվում, և արաբը համաձայնության փոխարեն կնոջը մի տոպրակ ալյուր պարզեց: Հերմիներն երկու ձեռքերով բռնեց, և այդ պահին Մահակն իրեն ազատ զգալով, ուզեց փախչել: Բայց արաբը բռնեց նրա գոտկատեղից ու ծոծրակից և խուրջինի պես ձիու վրա նետեց: Նրա հետևը նստեց ու ճչալով՝ քառատրոփ հեռացավ: Հերմիներն երկար ժամանակ տեղում գամված մնաց: Ձեռքը տոպրակի մեջ մտցրեց ու մի բուռ փոշի հանեց՝ բերանի մեջ խցկելով ու այսպիսով ճիչը խեղդելով:

Առժամանակ տղան պառկած մնաց մի այլ տեսակի՝ շատ ավելի մեծ, գորգերով ու պատերի վրա անհասկանալի արձանագրություններով զարդարված վրանում, որտեղ մարդիկ խոսում էին խոսքով ու կոպիտ մի լեզվով և անտարբեր նայում իրեն, բայց հերթով

կերակուր էին բերում, ճակատի քրտինքը սրբում և անկողինը փոխում: Երբ ճամփորդելու համար բավական կազդուրվել էր, նրան ձիու վրա նստեցրին ու դեպի չորային վայրերը գնացին, որտեղ, երբ շարասյուններին չէին դարանակալում, եզակի զբաղմունքները գիշերները կրակը հսկելն էր, որի վրա ուղտի յուղն էր թշնջում, իսկ ցերեկները՝ ջուր որոնելը: Սահակն այդ օրերից հստակ հիշում էր միայն տղամարդկանց լավաձայն աղոթքները և իր ստացած սպիտակ հանդերձանքը, որի վրա թլպատած առնանդամի սուր ցավը արյան հետքեր թողեց, իսկ նա չհասկացավ, ինչու էր այդ նոր և առնական ցավը ժպիտներ ու գոհունակության զգացում առաջացրել մյուսների դեմքերի վրա: Սպիտակ և արյունոտ հանդերձանքի հետ միասին նոր անուն ստացավ՝ Յուսուֆ, իսկ հին անվան մասին ոչ ոք չհարցրեց: Ինչը որ իրեն օգտակար եղավ, որովհետև երբ հետագայում իրեն փնտրեցին մինչև Ուրֆա և Դիարբեքիր, չգտան, քանի որ չգիտեին ում մասին հարցնեն:

Յուսուֆը ճարպիկ տղա դարձավ: Մովորեց ուղտերի երասանից բռնել ու ջրելու ժամանակ նրանց հսկել: Ձի հեծնելու արհեստը սովորեց, չոր սննդին վարժվեց և իմացավ ինչ ասել է համբերությունն ավագոտ տարածությունների դեմ հանդիման: Տղամարդու զգեստներ ստացավ, իր սեփական ձին ուներ՝ միակ էակը, ում հետ դեռևս կարող էր հայերեն խոսել, իսկ մյուսների հետ միասին, արևաձագին և արևամուտին, դեպի հարավ էր ծնկի իջնում՝ աղոթքի նման մի բան մրմնջալով: Մահվան օղակներում կոփված իր մարմնով, ավազից աչքերը պաշտպանող երկար թարթիչներով, հողմին դիմադրելու պատրաստ թուխ դեմքով, տոթից լավ պաշտպանող սև, գանգուր մագերով կարող էր անապատների վարժ հեծյալ մնալ: Արարերեն չիմանալն օգտակար եղավ: Ստիպված չէր իր մասին խոսել, ու ոչ ոք հարցերով նեղություն չէր տալիս: Ստիպված չէր աղոթքով դիմելու մի մարգարեի, որ հայտնվել էր իրեն արյունոտելու, այլ իր համար պահեց մյուս մարգարեին, որ հայտնվել էր արյունոտված:

Կարող էր այդ տարածքներում վարժ հեծյալ լինել ու մի օր էլ ցեղապետ դառնալ: Ձմեռը դեպի Կարմիր ծովի ափերը կիջներ, մինչև Մեդինայի մոտերքն ու գոնե մի անգամ կյանքում՝ մինչև Մեքքա, հետո կբարձրանար Երուսաղեմի ու Դամասկոսի արանքով մինչև իր շատ լավ իմացած վայրերն ու նույնիսկ ավելի վեր, դեպի լեռները՝ հասնելով Ռաս-ուլ-Այն և Մոսուլ: Բայց Յուսուֆը մենակ մնաց ու մյուսները գոհանալով նրա ճարպկությամբ՝ հանգիստ թողեցին նրան և իր ձիու հետ ունեցած անհասկանալի խոսակցություններին չխանգարեցին:

Յուսուֆը զարմանքով էր ապրում այդ կյանքը: Բայց այնպես, ինչպես պատահում է, երբ հարցերը հստակ չեն, պարզաբանումը միանգամից եկավ: Հասել էին Մոսուլ: Լավ օր էր եղել: Այժի պանիր և ուղտի կաշի էին ծախել: Վրանում տաքություն ու լռություն էր, խորովածի հոտ կար, սակայն արաբները, նախքան կրակի շուրջը բարձերի վրա բազմելը, հաշվում էին ոսկիները՝ քսակների մեջ լցնելով ու կապելով: Հետո կանայք նվերներով հիացան՝ սաթ, գործվածքներ ու զարդեր: Վրանի տերն իր բռի մեջ առավ զարդերից ամենագեղեցիկն ու կախարդի նման մատները բացելով՝ իր կանանցից ամենաերիտասարդին նվիրեց: Մա իր վզին կախեց և ուրախացած շրջվեց՝ գունայի ու զանգակներով թմբուկների նվագակցությամբ կրակի շուրջը պարելով: Կրակը կայծկլտում էր ու յուղի կաթիլներից թշնջում, դեմքերը փայլում էին ու բոցերի հետ միասին երկարում, թմբուկների ռիթմը միանում էր ծափերին, ու կինը շոթորում էր՝ իր երիտասարդության ու զարդի ուրախության մղումով:

Իսկ տղան այդ գարդը տեսավ, երբ կինը կոնքերն օրորելով ու կրծքերն ուսարմատից թափահարելով՝ իր մոտ հասավ: Տղան հիշեց հպարտությամբ ցույց տված ոսկե շղթայով կապված այդ թալիսմանը, որ իր մայրը երկչոտությամբ հագուստների տակ էր թաքցրել: Ոչ ոք չնկատեց տղային, երբ նա վրանից դուրս եկավ: Միակ բանը, որ կարողացավ անել, պղտորված մտքերով խելագարի պես վազելը եղավ: Ինքն էլ չգիտեր, թե ումից էր փախչում և վազեց մինչև որ շունչը կտրվեց, ու ծնկների վրա ընկավ: Եվ քանի որ իր մարմնից դուրս գալու, պոկվելու կարիքն էր զգում, սկսեց բղավել: Ավագի վրա նստեց և օրորվելով՝ ամբողջ ուժով գոռաց: Երբ գոռոցը մարեց՝ տեղ տալով Դեյր Էզ-Ձորի տնքոցին, չոր լացին, Յուսուֆն արդեն մեռել էր: Դժբախտ, օտար, լուռ մի էակ էր եղել, որ թափառել էր անծանոթ տեղերում և այնպիսի աստվածների միջև, որոնց չէր հավատում: Թորված արյունից ծնված ու գոռոցով սպանված: Յուսուֆը մեռավ ոչ այնպես, ինչպես պատահում է, երբ մի մարմին մի այլ մարմնի է սպանում, այսինքն՝ դրսից դեպի ներս ճեղքելով, այլ մեռավ ներսից դեպի դուրս ճեղքված, հենց այդ մարմնի կողմից, որի վրա էր ավելացվել՝ սպիտակ և արյունոտ հանդերձի նման:

Նոր հագուստը հանած, Յուսուֆին անպետք զգեստի պես ոտքերի տակ գցած՝ Մահակը վերադարձավ դեպի վրանները: Այս անգամ, այլևս ցեղի զավակ չլինելով, եկավ գաղտագողի՝ մթության մեջ թաքնվելով, կրակներն ու վրանների մուտքերը շրջանցելով: Անասունների ապաստարանը մտավ ու իր ձին երասանից կամացուկ ձգելով՝ դուրս հանեց: Ավագի մեջ նրանց քայլվածքը լուռ եղավ, ձին նրան հետևեց առանց որևէ փոփոխություն զգալու՝ լսելով ու հոտոտելով նրան, որովհետև իր համար Յուսուֆը երբեք գոյություն չէր ունեցել: Հետո քառատրոփը լսվեց, բայց այդ ժամանակ ձին ու ձիավորը հեռու էին:

Շարայունների երթուղու հակառակ ուղղությամբ գնաց դեպի արևմուտք, բայց դժբախտաբար մահվան օղակների միջից վերադարձը՝ մեռյալների Չատկից մինչև հարության Չատիկը, նաև ժամանակի միջով վերադարձ չի նշանակում: Ընդհակառակը, հորի մեջ ընկածի պես խորքից աստիճաններով մեկ առ մեկ բարձրանալով՝ միայն շարայունների հետքերը գտավ, ճանապարհի եզրին մուրացող վերապրողներ, ոսկորներ աղացող անդունդների համար նոր և անավոր անվանումներ, իր ազգին պատկանող՝ շավարներով երեխաներ, որոնց կրծքերում, ինչպես բների մեջ, Յուսուֆներ էին աճում: Բազմիցս ցանկացավ վրան վերադառնալ, այդ արաբին նրա կանանց ու երեխաների աչքերի առջև սպանել ու իր մոր թալիսմանը հետ վերցնել: Հետո ասաց, որ արաբը հանցավոր չէ, շղթան իր մոր վզից խլողը մի այլ տեղ էր, ու շատ մեծ պատերազմ է հարկավոր նրան գտնելու կամ նրա պես բոլորին սպանելու համար, որպեսզի վստահ լինի, որ իր մորն սպանողը պատիժն ստացավ: Ի վերջո, արաբն իր բարերարն էր եղել ու նրա հանցանքը չէր, որ ժամանակներն այնքան էին էժանացրել մարդ էակին, որ բեղունը տղայի կյանքը մի տոպրակ այլուր էր գնահատել:

Ռաս-ուլ-Այնում Մահակը վերստին տեսավ երկու տարի առաջ Մամուրայում թողած երկաթուղին, երբ օդի ու ջրի պակասության պատճառով կարմրած դեմքով իջել էր անասնատար վագոնից: Ձին ծախեց և մի օր ու գիշեր վագոնի մի անկյունում ծվարած ճամփորդեց մինչև Իզմիր: Վերադարձի ճանապարհը ցույց տվող ոչ մի նշան այլևս չգտավ: Ուստի որոշ ժամանակ նրա ճամփան եղավ այն գնացքների ու շոգենավերի ճամփան, որոնք նրան դեպի արևմուտք տարան՝ մինչև Բազարջիկ, ապա՝ Սիլիստրա:

Քանի դեռ փախչում էր, հուշերը նրան հանգիստ էին թողել: Երբ վերջապես Միլիստրայում հաստատվեց, մի վաճառականի մոտ աշկերտ ընդունվեց, որից հետո իր սեփական խանութը բացեց: Երբ ավելի ուշ սկսեց իր համար մի կողակից փնտրել ու մինչև կգտներ, նավահանգստում նավաստիներին սպասող աղջիկների մոտ էր ուշանում, ժամանակին աղլուխի պես ոտքերի տակ նետված բեդուինի քողը կենդանացավ, օձի նման ֆշշաց ու Սահակի հետքերով գնաց: Այդպես, մի գիշեր գազով լամպերի լույսերի արանքում պատուհանի մեջ արտացոլված Յուսուֆի դեմքը տեսավ: Սարսափած նայեց, թե ինչպես էր նա թմբուկների ու գունդաների նվագակցությամբ պարում, ինչպես էր անապատի բնակչի իր զգեստը պատառոտում, ինչպես էր ցատկոտելով վայրենի հայացքով ձեռքում բռնած առնանդամը շփում, ինչպես էր հնալով մատների արանքից ոչ թե սերմ, այլ արյուն արձակում: Չիմանալով ինչպես վտարել ուրվականին, որ նրան խեղածին սերմով էր ցողում, Սահակն ինչ-որ գործիք վերցնելով՝ հարվածեց պատուհանին: Յուսուֆը քրքջաց, նրա դեմքը կոտրվեց, հազարավոր այլ դեմքերի վերածվեց ու սենյակում տարածվեց: Երբ ուշքի եկավ, Սահակն իր վրա նայեց այնպես, ինչպես կար՝ վայրենացած դեմքով, հագուստներն անկարգ և դեռ չթուլացած ու այլանդակված առնանդամը ձեռքում: Հասկացավ, որ Յուսուֆն իր մեջ էր մտել ու պատուհանները կոտրելով և հայելիները ծածկելով չէ, որ այդ ցնորային կերպարանքի դեմ կարող էր պայքարել:

Սահակը և Յուսուֆն ատում էին միմյանց, բայց գիտեին, որ ստիպված էին միասին ապրել: Յուսուֆը տասնապատիկ կրեց Սահակին բաժին ընկած չարչարանքները՝ ստիպված լինելով տանել ուրիշ փրկչի ուղղված աղոթքները և այդ հավատին հատուկ բոլոր ծեսերը: Բայց նա այդ օտար ազգից վրեժ լուծեց ձեռքի տակ ունեցած իր միակ միջոցով, այսինքն՝ իր ծննդյան նշանը կրող առնանդամով, որի սերմը թունավորեց: Հավիտենապես կապված լինելով ամուլ մնացած այդ սերմին, որ նոսրանում ու պակասում էր ժամանակի ընթացքում, Յուսուֆն ինքն էլ էր պակասում: Իմ մանկության ժամանակ Սահակ Շեյթանյանը ծեր մարդ էր: Ուստի ես Յուսուֆին չճանաչեցի:

Երկու մասի կիսված, սովոր, որ յուրաքանչյուր կեսը մյուսին դարանակալի և մյուսին ատի, սպասի մյուսի քնելուն, որպեսզի նրան հարվածի, բայց հարկադրված միասին քնելու ու միայն երագում իսկապես իրարից բաժանվելու, քանզի այդ երկու կեսերը չէին կարող միաժամանակ երագել, Սահակը, մի կեսի թուլանալու համեմատ, եւ կնոջ՝ Արմենուհու հետ միասին հաշտվելով երեխա չունենալու մտքի հետ, քանի որ ատելու սովոր էր և իր կիսված հոգու հետնախորշերում չէր կարող ամբողջ ատելությունը թաքցնել, սկսեց ուրիշներին ատել: Նախ՝ Յուսուֆի նմաններին: Բայց, քանի որ սրանք թվով քիչ էին իր շուրջը, և իր չսպառած ատելությունը կրճատացնում էր այն կենդանիների ժանիքների պես, որոնք պատրաստ են պատառոտելու, այլապես աճում են մինչև սեփական գանգը ճեղքելը, Սահակն իր ատելությունը բոլշևիկների վրա հեղեց: Անսպասելի առիթը պատերազմից հետո երևաց, երբ, ի տարբերություն այն ժամանակվա, երբ Ֆոկչանի միակ համայնավարը հարբած մի բանջարաբույժ էր եղել, որի միակ քաղաքական գործունեությունը եղել էր փաթ ընկած լեզվով մայիսի 10-ի տոնին թագավորին ու նրա տոհմին հայհոյելը, մինչև որ իշխանությունները գլխի էին ընկել նրան ձեռքակալել առավոտ կանուխ՝ նախորդ գիշերվա հարբածությունից դեռ չարթնացած ու դեռ լռակյաց, ուրեմն պատերազմից հետո քաղաքը համայնավարներով էր լցվել:

Սահակը նրանց անվանում էր *տոպտանջիներ*, ավագակ համայնավարներ: Իր ցուցաբերած գորովի համար համայնավարները նրան վարձատրեցին սովորական առատաձեռնությամբ, այսինքն՝ խանութը կողոպտելով, հետո, երբ կողոպտելու ոչ մի բան չէր մնացել՝ ամբողջովին բռնագրավելով: Ամեն անգամ Սահակն ուրախանում էր. «Առե՛ք»,– ճչում էր ձեռքերը թափահարելով ու մի ոտքի վրա ցատկոտելով, «Կողոպտեցե՛ք»,– և նրանց հետևից Վան Հուտենի կակառյի տուփերն էր նետում՝ «Մա մոռացա՛ք առնել», կամ սուրճի հատիկներով տոպրակները, որոնք միջատների պես մայթի վրա էին ցրվում:

Տելեֆունկեն ռադիոն Սեֆերյանի դամբարանում թաքցնելու գաղափարը նա էր հղացել ու գիշերները մենակ գերեզմանոց էր գնում՝ «Ազատ Եվրոպայի» հաղորդումներն ունկնդրելու: 1958-ի ամռանն ագահ հայացքով հետևեց Կարմիր բանակի գումարտակներին, որոնք հեռանում էին Տեկուչ տանող ճանապարհով, հետո ժամեր շարունակ անշարժ նստեց մեր տան դիմաց՝ դիտելով տիկին Մարիայի ափսեի չափ հեռուստացույցի հաղորդած Գեորգե Գեորգիու Դեժի հուղարկավորությունը՝ առանց մանրամասնությունները բաց թողնելու, արևածաղկի սերմեր չրթելով, գարեջուր խմելով, մեկնաբանելով՝ կարծես մարգադաշտում լիներ: «Ռուսերը իրեն ճառագայթեցին,– ասում էր՝ այս անգամ առանց հանդիմանելու:– Իր դեղնախտը բացին»:

Եվ դարձյալ Սահակ Շեյթանյանն առաջինը եղավ, որ քարտեզների հմայքով գայթակղվեց: Իրենց մանկության վայրերից տեղահանված հայ ծերունիները փախան, գաղթեցին, անապատներ, մայր ցամաքներ, ծովեր և օվկիանոսներ անցան, բայց երբեք

* **Տոպտան** – մեծածախ առևտրականներ (ռուսներեն՝ թուրքերենից):

իրապես չճամփորդեցին: Աշխարհում թափառելը նրանց տխրությունների մի մասն էր, այլ ոչ թե՛ հետաքրքրությունների կամ ուրախությունների: Ուստի նրանք թղթային տարածությունների ճանապարհորդներ եղան, ինչպես գրքերի կարիճները:

Քարտեզներն իրական աշխարհում կտրվածքի էին նման, որոնք նոր չափումներ էին բացում: Այդ քարտեզների վրա պատերազմները միշտ ուրիշ տեսակ էին վերջանում, քան իրականության մեջ, լեռների ֆիդայիները հողմացրիվ էին անում բանակները, գերիներին հաջողվում էր փախչել բռնագաղթի ճամբարներից, իսկ ռազմիկներին՝ դուրս գալ շրջապատումից: Ամերիկացիներն իջնում էին Բալկանների վրա, անգլիացի պարաշյուտիստները երկինքն էին պատում, ռուսները Սիբիրի խորքերն էին քաշվում: Եվ, անշուշտ, Հայաստանը տարածվում էր Կովկասից մինչև Տիր ու Սիդոն, Անատոլիայից մինչև Ուրմիա լիճը, ինչպես Տիգրան Մեծի ժամանակ՝ Քրիստոսից առաջ վերջին դարում: Աշխարհը համընկնում էր քարտեզներին, որոնց վրա բազում սլաքներ նշում էին ելքը դեպի ցամաք, ազատագրումներ, վտարումներ, գրավված տարածքների վերադարձներ, եռանդ ու հաղթանակ: Բոլոր քարտեզներից ամենաաննշանը, ուստի ամենաքիչ նկատվածն ամենաներքնին էր՝ ուղիղ խոտի վրա փովածը, այսինքն նույն ինքը՝ իրականությունը: Հենց այս պատճառով նրա քարտեզների վրա ուրիշ դաշինքներ էին գործում ու պատերազմներն այլ կերպ էին վերջացել: Սևրի պայմանագիրը դեռևս ուժի մեջ էր: Յալթայի հանդիպումը տեղի չէր ունեցել, ու Ստալինի դիտմամբ բթացրած ծայրով մատիտը Եվրոպան չէր բաժանել: Սահակ Շեյթանյանն ու մանկությանս տարիների մյուս հայերն ավելի շուտ քարտեզների մարդիկ էին, այլ ոչ թե՛ հողի: Երբեմն այնքան անհաղորդ էին, հայացքներն այնքան հեռու հառած, որ կարծես քարտեզների հետ միասին ոլորվում էին ու անհետանում այս աշխարհից:

Շշուկների մատյանում յուրաքանչյուր բուրմունք, յուրաքանչյուր գույն, յուրաքանչյուր խենթության նշույլ իր մոզն ունի: Չարմանագան եզերքների ուղեկիցը՝ քարտեզների մոզը, Միքայել Նորատունկյանը եղավ: Մյուսները նրա շուրջն էին նստում՝ չռած աչքերով նայելով, թե ինչպես են մայր ցամաքները հարթվում նրա ձեռքերի տակ: Մեծ հայրս նստում էր իմաստուն ու լուռ. բացի քարտեզներից ոչ մի այլ բան չէր ապացուցում, որ ժամանակների խառնափնթորությունից անդին, այնուամենայնիվ, ինչ-որ իմաստ գոյություն ունի: Անտոն Մերգյանն այլևս մոռանում էր հարցնել ու, քարտեզների առջև, որտեղ բոլորի համար տեղ կար, այլևս չէր վիճաբանում Գրիգոր Մինասյանի հետ: Շտեֆանուկա Իբրայիլեանուն, Մկրտիչ Չեսլովը, Հակոբ Ասլանյանը, Վրեժ Փափազյանը, Օվանես Գրիգորյանն ու բոլոր մյուսները երկյուղած մոտենում էին՝ թողնելով, որ ուղեկցվեն դեպի այս նոր Բեթղեհեմը, որտեղ փրկությունը քարտեզի ձև ուներ: Սահակ Շեյթանյանն սոզորված դիտում էր այդ հրաշքը: Այն եզակի պահերն էին, երբ նա թմրազերծված փորոտիքով հաշտվում էր Յուսուֆի հետ: